

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՔՈՒՄ

ՀԱՅ ԿԵԱՆՔ
ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Ա. ՏԱՐԻ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ...

Հայ գրականության ներկայ շարքը՝ «Հայ Կեանք եւ Գրականութիւն», կ'առաջադրէ վերանայիլ հայ գրականության աւանդման մեթոտները, զանոնք դարձնել **աւելի համապատասխան՝ մշակութային-կրթական նոր իրադրութեան մը առարկայական պայմաններուն** - հասնող սերունդներու տարիք, հոգեբանական ընդհանուր ուրուագիծ, մտաւոր կարելիութիւններ ու նախասիրութիւններ: Ասով անիկա հաւատարիմ կը մնայ **պարբերական ինքնանորոգման աւանդութեան մը***, որ բնորոշ գիծ է եղած հայ մանկավարժական մտածողութեան, աւելի մասնատրաբար՝ **արեւմտահայ մշակութային գոտիին:**

... ԵՒ ՀԱՍԱՊԱՏԱՍԻԱՆ ՏԱՐԱՋԸ՝ ԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՏՐՈՒԱԾ ՆԱԽԱՊԱՏԻՈՒԹԵԱՄԲ

Օ Գրական հատուածներ եւ գրական վերլուծում կը դառնան իսկապէս առաջնահերթ՝ իբր դասանիւթի մշակման հիմնական միջոց ու միջնորդ: Գրապատմական տուեալները՝ էականին վերածուած՝ կը պահեն բանալի դեր, իբր գրական հատուածներ եւ այլ վերլուծական տարրեր համաձուլող, իմաստաւորող **ժամանակային շրջանակ:** Մեթոտի ընդհանուր յղացքին մէջ, նաեւ շարքի տիտղոսով թելադրուած, **Գրականութեան կողքին Հայ Կեանքի շեշտումը** նոյնպէս կը յուշէ գրապատմական միջավայրի անշրջանցելիութիւնը:

Օ Այսպէս, շարքի երկու գլխաւոր դասագիրքերը, նախատեսուած յաջորդաբար՝ 10րդ եւ 11րդ դասարաններուն համար, նիւթերու դասատրման հիմ ունին ժամանակագրական կարգը. բայց երկուքն ալ կը սկսին հայ նոր գրականութեան պատմութեան սկիզբ նկատուած 19րդ դարէն, եւ երկուքն ալ, համապատկեր կազմելու առաջադրանքով, կը հասնին մինչեւ 20րդի կէտէն ասդին (երկրորդ գիրքը՝ մինչեւ մեր օրերը):

Իւրաքանչիւր դասագիրք իր նիւթերը կը ներկայացնէ իր մակարդակով.

- Ա. գիրքը **միայն կը հպանցէ** մեզմէ հեռացած եւ այլապէս դժուարամատչելի դարձած **Չարթօնքի սերունդը.** ապա՝ բաւական թեթեւ կ'անցնի հետեւող սերունդներու վրայէն, կրկին՝ ընտրելով մատչելի դէմքեր ու գործեր:

- Բ. գիրքը **կը վերսկսի ժամանակագրական ընթացքը,** ու վերառնելէ ետք **Չարթօնքի սերունդը** իր ստորաբաժանումներով, հետեւող սերունդները կը սերտէ **առաւել խորացումով.** մինչեւ 20րդ դարու աւարտը:

- 12րդ կարգին համար **չէ պատրաստուած անջատ դասագիրք.** այլ բ. գիրքին կից յատելու մը, կազմուած ժամանակագրականէն տարրեր հիմունքով - ուսումնասիրութիւն՝ որոշ թիւ մը անջատ գործերու:

* Այս գնահատումներուն իբր հիմն՝ նկատի առնուած են 1940ական տարիներուն մշակուած Յակոբ Օշականի «Հայ Գրականութիւն» հատորը (յատկապէս իր երկրորդ մասով), եւ Մ. Իշխանի «Արդի Հայ Գրականութիւն» եռահատոր շարքը (1970ականներ):

ԱՄԲՈՂՋԱՑՈՒԱԾ՝ ԲՆԱԲԱՆԱՅԻՆ ԴԱՍԱԴՐՈՒՄՈՎ ՄԸ...

Օ Շարքի գոյգ գիրքերում վրայ ուշադիր ակնարկ մը կը բաւէ՝ նկատելու համար որ, «Մաս»երով (Մաս Ա., Մաս Բ. ...) արտայայտուող ժամանակագրական արտաքին շրջանակէն ներս, նիւթերու մշակումը կատարուած է **ըստ գրական սեռերու եւ ըստ նիւթերու՝ բնաբաններու կամ թեմաներու** - այլապէս վճռական սկզբունքներ՝ նիւթի ներկայացման եւ ընկալման համար (մանրամասնութիւնները՝ տեսնել Բովանդակութեան Ցանկ, էջ 7):

- Այս դրութիւնը, կը հաւատանք, կ'օգնէ հետեւելու տուեալ **գրական սեռի/տեսակի գարգացումներուն**, կը դիրացնէ գործէ գործ կամ բնաբանէ բնաբան **յղումները, համեմատութիւնները**, աշխատանքներու կատարումը՝ առաւել թափանցումով*: Կարճ ինքնին **կը կայացնէ վերլուծական մօտեցում մը**:

- Այս դրութիւնը նաեւ արտօնած է գրական հատուածները ընտրել ու ձեւաւորել՝ իրաքանչիւրը շուրջ մէկ էջի ծաւալով. ինչ որ աւելի կը համապատասխանէ ներկայ կշռոյթներու եւ պատահական տարիքի պահանջներուն: Այսպիսի ձեւաւորման մը հետեւանքներէն՝ պատկերացումներու մասնատումը կը հակակշռուի **քանի մը կարեւոր գործերու ամբողջական քննարկումով**: Առաջին գիրքը կը սերտէ հինգ գործեր՝ «Կարմիր ժամոց» (Ա. Արփիարեան), «Հացին Երգը» (Դ. Վարուժան), «Ազգայութեան Ճանապարհին» (Ա. Ահարոնեան), «Կեանքը Հին Հռոմէական Ճանապարհի վրայ» (Վ. Թոթովեց) եւ «Ծաղրանկարներ» (Ն. Պէշիկթաշլեան):

„, ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ ՆԻԹԻ ՏՆՏԵՍՈՒՄՈՎ

Օ Գրապատմական տարրերը առհասարակ ամփոփուած են Մասերու եւ Գլուխներու ներածական էջերուն** մէջ: Ինչպէս **կենսագրութիւնները**, այնպէս ալ գրական հատուածները բացող **բացատրական պարբերութիւնները**, գրապատմական **նիւթի կուտակումէ խուսափելով**՝ միանգամայն կ'ամբողջացնեն այդ նիւթը: Նոյնը՝ մէջէմէջ տրուած «Փաստաբանութիւն»երու, «Վկայութիւն»երու եւ շրջանակեալ այլ տարրերու համար: Ասոնք բոլորը, փոքրածաւալ, այլազան ու մնացեալին յօդաւորուած՝ նաեւ հարցարաններու միջոցով, կը միտին կենդանի եւ «օղատուն» ամբողջներու ստեղծման: Չանք թափուած է ամուսն երեսութեան ցրումը հակակշռելու **ներքին կեդրոնամէտութեամբ**:

„, ԵՒ ԳՐԱԿԱՆ ՄԵԹՈՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՈՎ

Օ Անջատ ամբողջութիւն մը կը կազմէ **գրական մեթոտի դասերու շարքը**, որ անհրաժեշտ պարզացումով կը ներկայացնէ **գրականութեան տեսութեան** հարցերէն մի քանին, համապատասխան **հրահանգ-վարժութիւններով**:

* * *

Խօսելէ ետք շարքի մանկավարժական յղացքին ու մեթոտին մասին, կ'արժէ դարձեալ անդրադառնալ **գրականութեան ընդհանրական պատկերացման**, որ

* Դրութեան անմիջական-գործնական մէկ ուրիշ հետեւանքը անշուշտ այն կ'ըլլայ, որ տուեալ հեղինակ մը, իր գործի տարրեր մակարդակներով կամ երեսներով, կրնայ տեսնուիլ յաջորդաբար երկու տարի, երկու յաջորդական գիրքերուն մէջ: Ուրիշ մը կրնայ ներկայութիւն ըլլալ միայն ա. գիրքին, կամ միայն բ. գիրքին մէջ: Տակաւին, բազմասեռ գործերու հեղինակներ նոյն գիրքին մէջ կրնան երեւիլ մէկէ աւելի անգամներ - տարրեր գլուխներու տակ: Սինչ ճիգ թափուած է առաւելագոյն օգտուելու վերը նշուած անվիճելի առաւելութիւններէն, միւս կողմէ որդեգրուած են ներկայացման կայուն ձեւեր, ինչպէս ներ-բնաբանային ու միջ-բնաբանային «Համադրական Հրահանգներ»-ու շարքեր, խափանելու համար նիւթի մասնատումը, ցրումը:

** Հագումաւորուած, ուսուցիչը պիտի հանդիպի զուտ գրապատմական գլուխներու, առանց գրական հատուածներու: Այսպէս՝ գոյգ գիրքերու սկիզբի գլուխներէն ոմանք: Պատճառ՝ խնդրոյ առարկայ ժամանակաշրջաններու հպանցիկ քննարկումը:



կը շեշտէ գրականութեան դերը՝ իբր կեանքի հայելի, կեանքի մաս: Մեր իրականութեան մէջ, պատմա-քաղաքական ծանօթ պայմաններ աւելի՛ շեշտած են հայ գրականութեան այս դերը: Մեր գրականութիւնը, մինչեւ այսօր, հակառակ բազմապիսի դժուարութիւններու, **առանձնաշնորհեալ հայելին է եղած հայ կեանքին**, անոր բազկերակը - նոյնիսկ իր ամենէն «անհատական» դրսեւորումներով: Եւ կը մնար այդ կենսականութիւնը արտայայտել մանկավարժական մակարդակին. զայն վերածել **գրականութեան ասանդման մեթոտի**:

Բացայայտելու համար **հայ հոգեմտաւոր կեանքի այս միութիւնը**, տակաւին անհրաժեշտ նկատուած է զոյգ հատորներուն մէջ արագօրէն անդրադառնալ գրականութեան կապին՝ **գեղարուեստի այլ ճիւղերու հետ** - քատրոն, շարժարուեստ, գեղանկարչութիւն, երաժշտութիւն...: Այս կապերու, ինչպէս եւ՝ երբեմն, հայ ու օտար գրականութիւններու կապերու բացայայտումին է, որ կը միտին **«Կամուրջներ... Կապեր» խորագրուած** էջերը:

Հատորներու **պատկերագրումը**, կարելի ճոխութեամբ, նոյնպէս դարձած է խնամքի առարկայ: **Լուսանկարներու** պարագային, փաստագրական շահեկանութեան կողքին, չափանիշ ընդունուած է անոնց թելադրականութիւնը: Իսկ **գեղարուեստական վերարտադրութիւնները** (գեղանկարչական կամ այլ) կ'արձագանգեն գրական բնագիրներուն՝ առանց կրկնելու զանոնք, միանգամայն փորձելով ընդլայնել **«Կամուրջներ... Կապեր»** բաժինի հարկադրաբար անձուկ պատուհանները՝ գեղարուեստներու աշխարհին վրայ բացուող:

Այլապէս օգտակար ըլլալու կոչուած գործիքներ են.-

ա. ներքին **խաչածեւ յղումներու համակարգը**, **նշուած** փոքր սլաքանիշով (>).

բ. **ժամանակագրական տախտակները**՝ չորս մասերու վերջաւորութեան.

գ. հեղինակներու եւ հատուածներու **այբենական ցուցակը** (էջ 326).

դ. **եզրաբանական-վերլուծական բառարանը** (էջ 319էն), որ էջ առ էջ կու տայ իմաստը գրապատմական թէ այլ մարզի եզրերու եւ բառերու, գործածուած՝ բացատրական բաժիններու մէջ (մասերու/գլուխներու ներածութիւններ, հատուածներ ներածող պարբերութիւններ, կենսագրութիւններ, հարցարաններ): Այս բառերը գիրքին մէջ իրենց առջեւ ունին աստղանիշ: Բառարանի ետին, բոլոր բառերը վերառնուած են, այս անգամ՝ **այբենական կարգով**:

ե. հատորէն անջատ պատրաստուած **եռալեզու բառարանը** (հայերէն-անգլիերէն-ֆրանսերէն) կը խմբէ եզրաբանական-վերլուծական բառարանի բառերը, նաեւ բացատրական բաժիններէն ա՛յլ բառեր (գիրքին մէջ աստղանիշ կրող), նաեւ գրական հատուածներու լուսանցքին բացատրուած բառերը: Օգտակար, թերեւս եւ անհրաժեշտ գործիք՝ **Սփիւռքի նուազ հայախօս շրջաններու** աշակերտներու գրասեղանին վրայ:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԵՒ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ

Նիւթերը, հակառակ նշուած սկզբունքներուն, ոմանց **կրնան թուի չափազանց առատ**՝ նկատի առած վարժարաններու հայ գրականութեան դասապահերու թիւը: Առանց մոռնալու, որ այդ դասապահերը յաճախ **անարդարանալիօրէն անբաւարար են**, - շեշտենք, որ նիւթերն ու առաջադրուած աշխատանքները **կենթադրեն ընտրանք**՝ հիմնուած ուսուցիչներու նախասիրութիւններուն վրայ:

Նման ընտրանքի համար, կարելի է օգտուիլ դասագիրքերու **կառոյցի մասնայատկութիւններէն**.- Բնաբանային խմբումները կարելի կը դարձնեն տուեալ բնաբանի հատուածներէն մի քանին խորքով սերտելէ ետք՝ **ուրիշներ տեսնել իբր պարզ ընթերցման նիւթ, դասարանային թէ տնային**: Նոյնպիսի ընտրութիւն կարելի է լայն քննարկումի սահմանուած երկերու պարագային: **«Գրական Մերոյ»-ի դասերը**՝ մնացեալէն լրիւ անկախ՝ կրնան անտեսուիլ մասամբ կամ լրիւ: Գրապատմական նիւթերը (գլուխներու ներածութիւն, շրջանակեալ «Փաստաթուղթ» են.)՝ նախընտրելի պիտի ըլլար շատ տեղեր **գործածել իբր «Ուսուցիչի Գիրք»**, եւ աշակերտին տրամադրել մաս-մաս կամ աստիճանաբար...:

Շարքը ուսուցիչին կ'ընձեռէ կարելիութիւնը՝ գտնելու միջավայրի կրթա-մշակութային պայմաններուն պատշաճող այսպիսի լուծումներ:



ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԳԻՐՔԻ

ԳԼՈՒԽ 1. Գրական Մեթոս Ա.	12
Գրական մշակույթ, Հեղինակ եւ Գործ. Սեռեր	
I. Գրականությունը՝ Դասանիւթ. Այս Դասագիրքը	12
II. Գրագէտը եւ Երկը	13
III. Գրական Գործը Ժամանակին մէջ	17

ՄԱՍ Ա.- ԶԱՐԹՕՆՔԻ ՇԱՐԺՈՒՄ

ԳԼՈՒԽ 2. Մշակույթ եւ Գրականություն (1840-50ական տարիներ)	19
<i>Պարմական ակնարկ. Ընկերա-քաղաքական Կացութիւն - Զարթոնքի Շարժման Նախապայմաններ - Զարթոնքի Շարժում. Գլխաւոր Մարզեր - 1. Լեզու, Գրականություն, Պարմություն - Հրատարակություններ</i>	
<i>2. Պարբերական Մամուլ (թերթեր) - 3. Թատրոն - 4. «Ընկերություն»ներ, Դպրոցներ, Դէմքեր</i>	
- Կամուրջներ... Կապեր Ա.- Թարգմանական Գրականություն. Ազդեցություններ	28

ԳԼՈՒԽ 3. Գրական Զարթոնք. Բանաստեղծություն (մինչեւ 1870ականներ)	30
Զարթոնքը 1870ական տարիներուն - Գրական Շարժման Չեւաւորումը	

I. Բնարան - Մարդկային Հոգի եւ Բնություն	
1 Ա. Գարուն (Մկրտիչ Պէշիկթաշիեան - Կենսագրություն)	32
2 Բ. Լճակ (Պետրոս Դուրեան - Կենսագրություն)	34
II. Բնարան - Կեանք եւ Մահ	
3 Ա. Հեծեծմունք (Պ. Դուրեան)	35
4 Բ. Ի՞նչ կ'ըսես (Պ. Դուրեան)	36
III. Բնարան - Ազգ. Հայրենիք, Պայքար	
5 Ա. Եղբայր եմք Մեր (Մ. Պէշիկթաշիեան)	38
6 Բ. Իմ Յաւր (Պ. Դուրեան)	39
7 Գ. Մանկութեան Օրեր (Միքայէլ Նալբանդեան - Կենսագրություն)	41
8 Դ. Արարսի Արդատութիւն (Ռափ. Պարկանեան - Կենսագրութ.)	43

- Կամուրջներ... Կապեր Բ.- Պատուհան՝ Հայկական Գեղանկարչութեան վրայ	44
- Ժամանակագրություն	45

ՄԱՍ Բ.- ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ՝ ԱԻԵԼԻ ՄՕՏ ԿԵԱՆՔԻՆ

ԳԼՈՒԽ 4. Պատմա-քաղաքական Վէպը (1875-1885)	47
Հայ Իրականությունը 1875էն ետք - Մշակութային Առաջընթացը՝ Ուրիշ Ինքնահաստատում - Պատմա-քաղաքական Վէպը՝ Ծերենց եւ Բաֆֆի	

I. Բնարան - Հերոսը Վճռական Քայլի առջեւ	
9 Ա. Թորոս Իշխանը՝ Կիպրոսէն դէպի Կիլիկիա (Ծերենց - Կենսագրութ.)	50

10 Բ. Յովնան եւ իր Սասունցիները՝ դէպի Մուշ (Ծերենց)	53
11 Գ. Դաւիթ Բէկ Կանչուած՝ Հայրենիքը Փրկելու (Բա.Ֆ.Ֆի - Կենսագրք.)	55
12 Դ. Ինքնապաշտպանութեան Դասը (Բա.Ֆ.Ֆի)	57
II. Բնարան - Ազգային Միութեան Դժուարին ճամբան	
13 Ա. Լամբրոնի Պարիսպներուն րակ (Ծերենց)	59
14 Բ. Դաւանանին Վերջին խաղը (Բա.Ֆ.Ֆի)	60
15 Գ. Հերոս Աղջիկ մը՝ Հերոսներու կողքին (Բա.Ֆ.Ֆի)	61

ԳԼՈՒԽ 5. Երգիծանք եւ Ընկերային Քննադատութիւն - 3. Պարոնեան 64
Ազատ Ազգի եւ Ժողովրդավար Ընկերութեան համար - Հանճարեղ Պահապան մը

I. Բնարան - Ընկերային Կեղծիք (Կենսագրութիւն 3. Պարոնեանի)	
16 Ա. «Մեծապարիս Մուրացիան» Խմբագիրը	65
17 Բ. «Նրբացուցիչ» փաստաբանի մը հեպ	67
18 Գ. Ճշմարտութիւնը՝ «Ազգային Չոջ»ի մը մասին	69
II. Բնարան - Մարդկային Սնտիառութիւն	
19 Ա. Ինչպէ՞ս Լուսանկարուիլ	72
20 Բ. Չոջը, որ ամէն Գործի Անհրաժեշտ է	73
- Կամուրջներ... Կապեր Գ.- Գրականութիւն եւ Թատրոն	76

ՄԱՍ Գ.- ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գլուխ6.«Մեր Կեանքի» Սերունդը. Պատմուածք, Վէպ, Թատերգութիւն, Քրոնիկ (1880-90ականներ 77
Հայ Իրականութիւնը 1880-90ական Տարիներուն - Մշակութային Շարժումը Գնշուած, բայց Յանճառու -
Լեզուի եւ Գրականութեան Նոր Որակ Ժողովրդական, բայց Բիւրեղացած

I. Բնարան - «Մեր Կեանքը». Քրոնիկ	
21 Ա. Պանդուխտի Կեանքը (Հրանդ - Մելքոն Կիրճեան - Կենսագրք.)	80
22 Բ. Բարեբախը (Գրիգոր Չօրասպ - Կենսագրութիւն)	82
23 Գ. Երկաթուղու Շինութիւնը (Յովհաննէս Թումանեան - Կենսագրք.)	85
II. Երկի Քննարկում - «Կարմիր Ժամուց» (Ա. Արփիարեան - Կենսագրք.)	
24 Ա. Հայրասպետ Էֆէնդիին իր Թաղին մէջ	89
25 Բ. Էֆէնդիին եւ Տէր Յուսիկ՝ դէմ դէմի	90
26 Գ. Անցեալի մը Կարճ Պատմութիւնը	92
27 Դ. Հարցաքննութիւն եւ Խղճի Քննութիւն	93
28 Ե. «Աս Կարմիր Ժամուց է...»	95
III. Բնարան - Լուռ Յաներ եւ Տենչեր	
29 Ա. Քարիտէզիան (Ե. Սրմաքէշիասնիեան, Երուսալմ - Կենսագրք.)	98
30 Բ. Պարասպ Պայուսակը (Գր. Չօրասպ)	100
31 Գ. Մահավճիռ եւ Խիղճ (Լեւոն Մեղրոսեան, Շանթ - Կենսագրութիւն)	102
32 Դ. Արուեստագէտ Հոգի մը (Շիրվանզադէ - Կենսագրութիւն)	104
IV. Բնարան - Ընկերութիւնը՝ Այլասերած եւ Անարդար	
33 Ա. Նորեկ մը՝ Քաղաքին մէջ (Գր. Չօրասպ)	107
34 Բ. Իմ Ընկեր Նեսոն (Յովհ. Թումանեան)	109
35 Գ. «Սրբի Տափարի մէջ...» (Գաբրիէլ Սունդուկեան - Կենսագրք.)	111
36 Դ. Պարիս եւ Պարկեչտութիւն (Շիրվանզադէ)	114

ԳԼՈՒԽ 7. Գրական Մեթոտ Բ.	116
I. Գրական Մեթոտ եւ Տեսակներ	116
II. Պատմողական Մեթոտ եւ Տեսակներ	119
- Ժամանակագրութիւն	125

ՄԱՍ Գ.- ՅԱՆՈՒՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ

Քաղաքական և Ընկերային Պայմաններ - Մշակութային Կեանք

Գլուխ 8. Մեծ Բանաստեղծներու Մերուկը (1900էն 1915 - եւ 1920) 127
Լեզուի Խնամք՝ Արուեստի Պահանջկոտութիւն - Յեղափոխական Արուեստի մէջ, հայ Իրականութեան մէջ

- I. Բնաբան - Բնանկար եւ Այրում**
- 37 Ա. Աքախաներու Շուքին փակ (Միսաք Մեծարեւնց - Կենսագրութիւն) 134
- 38 Բ. Չմբասնակ Պարզ Գիշեր (Մ. Մեծարեւնց) 135
- 39 Գ. Կանչրեւէ, Տղա՛ս... (Վահան Թէքէեան - Կենսագրութիւն) 136
- 40 Դ. Գեղոս Սօսեաց Անբարեկամ (Վ. Թէքէեան) 137
- 41 Ե. Անուշ - Երգ Առաջին (Յ. Թումանեան) 138
- 42 Չ. Ծիւղակ (Եղիշէ Չարեւնց - Կենսագրութիւն) 140

- II. Բնաբան - Հայրենական**
- 43 Ա. Հօրս Բանտին մէջ (Դանիէլ Վարուժան - Կենսագրութիւն) 142
- 44 Բ. Այլ մը Մոխիր, Հայրենի Տուն (Միսանթո - Կենսագրութիւն) 144
- 45 Գ. Հարսին Երազը (Միսանթո) 146
- 46 Դ. Տաղ Հայերէն Լեզուին (Վ. Թէքէեան) 148
- 47 Ե. Հայրենի Ծուխը (Աւերիք Իսահակեան - Կենսագրութիւն) 149
- 48 Չ. Մեր Երկիրը Սուրբ է եւ Հին (Վահան Տէրեան - Կենսագրութիւն) 150

- III. Երկի Բննարկում - «Հացին Երգը» (Դանիէլ Վարուժան)**
- 49 Ա. Յան 153
- 50 Բ. Յորեանի Ծովեր 154
- 51 Գ. Հունչք կը ժողովեմ... 156
- 52 Դ. Կալերու Գիշեր 156
- 53 Ե. Օրհնութիւն 158
- 54 Չ. Աղօրիք 159

- IV. Բնաբան - Վիշր եւ Պայքար**
- 55 Ա. Ես Երգելով Կուգեմ Մեռնիլ (Միսանթո) 160
- 56 Բ. Երգ (Մ. Մեծարեւնց) 161
- 57 Գ. Երկրում (Յ. Թումանեան) 162
- 58 Դ. Ահաւոր Բան մը Այնպէս... (Վ. Թէքէեան) 164
- 59 Ե. Սպասում (Դ. Վարուժան) 165
- 60 Չ. Արեւածագ (Վ. Տէրեան) 167
- 61 Է. Դէպի Ապագան (Ե. Չարեւնց) 167

- Կամուրջներ... Կապեր Գ.- Գրականութիւն եւ Երաժշտութիւն 169

Գլուխ 9. Արձակի Ծաղկումը. Վէպ, Պատմուածք... (1900-1915 - եւ 1920) Լեզուի Խնամքը՝ 170
իր Երկու Երեսներով - Ներաշխարհ եւ Գաղափարական Խորք - Բնաշխարհ, Տոհմիկ Կենցաղ - Մեր Կեանքի Ծարունակուող Քրոնիկը

- I. Բնաբան - Անկաշկանդ Չգրումներ**
- 62 Ա. Չգրումի մը Ծնունդը (Չապէլ Եսայեան - Կենսագրութիւն) 172
- 63 Բ. Մեծ Կին մը (Լ. Շանթ) 174

- II. Բնաբան - Բախող, Շեղող, Նահանջող Չգրումներ**
- 64 Ա. Անդրշիրիմեան Սէր (Գր. Չօհրասպ) 176
- 65 Բ. Հոգի մը՝ Փոքրիկի մէջ (Լ. Շանթ) 178
- 66 Գ. «Խա՛ջ Քաշի՛ր Ինչ վրայ...» (Նար-Դոս, Միք. Յովհաննիսեան - Կենսագրութիւն) 180
- 67 Դ. «Ի՞նչպէս եմ կարողանում Ապրել...» (Դ. Դեմիրճեան - Կենսագրութիւն) 182

III. Բնաբան - Բնաշխարհ եւ Տոհմիկ Կենցաղ

68 Ա. Պոուր մի Ջուր (Ռուբէն Չարդարեան - Կենսագրութիւն) 185
69 Բ. Աղէտը Համբարձման Տօնին (Յակոբ Օշական - Կենսագրութիւն) 187
70 Գ. «Ազգային Երգը» (Ա. Իսահակեան) 189

IV. Երկի-Քննարկում - «Ազգայութեան ճանապարհին» (Ա. Ահարոնեան - Կենսագրութիւն)

71 Ա. Ճակարագրէն Չվախցող Մարդ մը 192
72 Բ. «Ես էլ չեմ Աղօթի...» 194
73 Գ. Արիւնոյր Թթխմոյր 196
74 Դ. Նա էլ Ընկաւ... 198
75 Ե. Արեան Պարտը 200
76 Չ. Հագրէն 202

V. Բնաբան - Մեր Կեանքին Շարունակուող Քրոնիկը

77 Ա. Վերապրում Աւերակներուն մէջ (Չ. Եսայեան) 204
78 Բ. Մեծ Յոբէլեաններէն ետք (Երուանդ Օրեան - Կենսագրութիւն) 206
79 Գ. Սէպիլի Վրաններուն փակ (Ե. Օրեան) 209
80 Դ. Պարտիրակ՝ «Մեծ Եղեռնի Քաղաքին» մէջ (Ա. Ահարոնեան) 210

- Կամուրջներ... Կապեր Ե.- Պատուիւան՝ Հայկական Գեղանկարչութեան վրայ 213

ԳԼՈՒԽ 10. Գրական Մեքոտ Գ.

I. Բնարական Սեռի Երկեր 214

II. Չափածոն եւ Իր Կանոնները 218

- Ժամանակագրութիւն 226

ՄԱՍ Ե.- ԵՂԵՌՆԷ ՎԵՐԱՊՐՈՒՄ ԵՒ «ՆՈՐ ԾՆՈՒՆԳ»

- Քաղաքական եւ Ընկերային Կացութիւն - Մտաւորական-մշակութային Մթնոլորտ 229

Գլուխ 11. Բանաստեղծութիւն. Հին եւ Նոր (1920-1970)

Հիներ՝ Նորերու կողքին - Աւանդապահ Նորեր - Նոր Ծնունդ

I. Բնաբան - Երէկի Փորջ. Վաղուան Ուղի

81 Ա. Որբերուն Չեռքերը (Վ. Թէքեան) 235
82 Բ. Հին Կարօյր (Ահարոն) 236

II. Բնաբան - Արժէք եւ Աւանդ

83 Ա. Ես Մասիսը չրեայ (Մ. Իշխան) 237
84 Բ. Թողթ առ Երեւան (Ա. Ծառուկեան) 238
85 Գ. Երգ Կռունկի մասին (Գ. Էմին) 239
86 Դ. Կոմիտաս Վարդապետին (Պարոյր Սեւակ) 240

III. Բնաբան - Մարդկային Կացութիւն

87 Ա. Յիշարակն իմ Մանկութեան (Վահէ-Վահեան) 242
88 Բ. Դուն կ'ուզես Թռչիլ (Մ. Իշխան) 243
89 Գ. Երբ կը խորհիմ ես Մահուան (Ն. Սարաֆեան) 244
90 Դ. Թաղս (Չահրար) 245
91 Ե. Պար (Չ. Խրախունի) 246
92 Չ. Տաղ (Ե. Չարենց) 247
93 Է. Երգ Երգոց (Ս. Կասյուրիկեան) 248

IV. Բնաբան - Պարկերներ, Պահեր

94 Ա. Արեւ-Անջրեւ (Ն. Սարաֆեան) 250
95 Բ. Պարապութիւն (Պ. Սեւակ) 251

- Կամուրջներ... Կապեր Չ.- Պատուիւան՝ Հայկական Գեղանկարչութեան վրայ 253

Գլուխ 12. Անցումի Արձակ եւ Նոր Արձակ - 1920-1970ի շուրջ)	254
Անցեալի Վերակենդանացում - Եղեռնէ Վերապրում - Պատկերներ Նոր Կեանքէն	
I. Բնարան - Անցեալը Վերապրուած	
96 Ա. Առջիննեկի մը Ծնունդը (Յ. Մնչուրի)	255
97 Բ. Առքօ-Մօսօ (Կ. Սասունի)	257
98 Գ. Միջոյի Երազը (Համասարեղ)	259
99 Դ. Կովու Գլուխ (Բ. Նուրիկեան)	261
100 Ե. Պարանիի Յուշ եւ Երազ (Վ. Շուշանեան)	263
101 Ջ. Դաիթի Չաղագքին Պահապանը (Խ. Դաշտենց)	266
II. Երկի Քննարկում - «Կեանքը Հին Հոռնէական Ծանապարհի վրայ» (Վ. Թոթովենց - Կենսագրութիւն)	
102 Ա. Առաջին Յիշատակներ	269
103 Բ. Մեր Պարտէզը	270
104 Գ. «Պիտի Կարգենք էդ Տղան»	271
105 Դ. Արամ ու Եւա	273
106 Ե. Աղանիները	274
III. Բնարան - Եղեռնէ Վերապրում	
107 Ա. Խնդացնող Հիւրը եւ Որբերը (Ա. Ծառուկեան)	276
108 Բ. Գաղթականներ (Շ. Շահնուր)	278
109 Գ. Աւրիկը եւ Մեծ Մաման՝ Մեծատրիին քով (Հ. Չարդարեան)	280
110 Դ. Հարցականներ՝ Ռուբիկին հետ (Լաս)	282
111 Ե. Երեւանի «Ղանթարը» (Գ. Մահարի)	284
IV.- Բնարան - Պարկերներ՝ Նոր Կեանքէ մը	
112 Ա. Լի-Չինկ-Երն (Ա. Հայկազ)	286
113 Բ. Կայարան Թիւ 4 (Վ. Օշական)	288
114 Գ. Մեղադրեալ՝ Պերութիւնը (Լ. Կամսար)	290
115 Դ. «Կարօր չմոռցուի» (Հ. Քոչար)	293
V. Երկի Քննարկում - «Ծաղրանկարներ» (Ն. Պէշիկբաշլեան - Կենսագրութիւն)	
116 Ա. Արշակ Չոպանեան	295
117 Բ. Չապէլ Եսայեան	297
118 Գ. Վահան Թէքեան	298
119 Դ. Շաւարշ Նարդունի	300
VI. Բնարան - Մարդկային Տրամներ	
120 Ա. Շահպազ եւ Շողիկ Հարս (Յ. Օշական)	302
121 Բ. Չոհարերում (Լ. Շանթ)	303
122 Գ. Գաւառայինի Մայրամուտը (Ա. Բակունց)	305
- Կամուրջներ... Կապեր Է.- Հայկական Շարժարուեստ (Սինեմա)	308
ԳԼՈՒԽ 13. Գրական Մեթոտ Գ.	310
I. Թատերգական Սեռի Երկեր	310
II. Գաղափարագրական Սեռի Երկեր	315
- Ժամանակագրութիւն	316
ա- Եզրաբանական-բացատրական Բառարան՝ էջ առ էջ	319
բ- Եզրաբանական-բացատրական Բառարանի այբբենական ցուցակ	324
գ- Հեղինակներու եւ Հատուածներու Այբբենական Ցուցակ	326

2

ՉԱՐԹՕՆՔԻ ՇԱՐԺՈՒՄ

ՄՇԱԿՈՅԹ

ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1840-50ական տարիները

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ. ԸՆԿԵՐԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Ա. 1850-ին շատ առաջ, արդեն կը դիտենք քանի մը կարելուր նախապայմաններ՝ հայության յետագայ տասնամեակներու ազգային-մշակութային Չարթունքին համար.-

- Նախորդ դարերուն, Օսմանեան կայսրութեան մայրաքաղաք Պոլիսը իրեն քաշած էր մեծաթի հայութիւն: Հիմնուած պատրիարքութեան շուրջ կազմուած էր *ամիրաներու *վերնախաւ մը, գրաւելով առեւտրական եւ պետական-վարչական կարելուր դիրքեր:

- Իսկ արեւելեան Հայաստանէն՝ կարելուր համրանք մը սկսած էր խմբուիլ Թիֆլիս՝ Վրաստանի թագաւորութեան մայրաքաղաքը:

- Տնտեսական-մշակութային որոշ շարժում կար նաեւ նուազ կարելուր գաղութներու մէջ, ինչպէս Չմիւռնիա, Նոր Նախիջեւան, Մոսկուա եւ Փեթերսպուրկ:

- Չարգացումի *օճախներ էին նաեւ կարգ մը եւրոպական կեդրոններ, ինչպէս Վենետիկն ու Ամսթերտամը - առանց ունենալու հաստատուած մեծաթի հայութիւն:

- Այս օճախները, իւրաքանչիւրը՝ ըստ իր աշխարհագրական դիրքին եւ ընկերային-մշակութային վիճակին, կը հաղորդուէին արեւմտեան *քաղաքակրթութեան մթնոլորտով, *կիրացնէին զայն: *Համաշխարհային մշակոյթը, այս կամ այն չափով ու ձեւով, կը հասնէր անոնց բոլորին:



Աշխարհի քարտէս պատրաստուած Մ. Վանանդեցիի կողմէ սեփական տպարանին մէջ, Ամսթերտամ (1696)

Հայկական հին գաղութներէն՝ առեւտրական եւ մշակութային *կենսունակութիւն ունէին նաեւ Նոր Ջուղան (Պարսկաստան), Կալկաթան եւ Մատրաքը (Հնդկաստան):

Բ. Բայց նպաստաւոր այս պայմաններէն չէր օգտուէր բուն *հայրենի երկիրը՝ հայ գաղթականութեան աղբիւրը: Բաժնուած Օսմանեան եւ Պարսկական կայսրութիւններուն միջեւ, *բնիկ հայութեան մեծ *զանգուածը կը շարունակէր ապրիլ ծանր պայմաններու մէջ:

1700ական թուականներուն, արեւելեան այս երկու *բռնակալութիւնները յաճախ իրարու դէմ պատերազմներ կը մղէին, միանգամայն ունենալով ներքին տագնապներ ու բախումներ: Այս բոլորը անտանելի վիճակի կը մատնէին իրենց քրիստոնէայ *հպատակները, յատկապէս Օսմանեան պետութեան գիւղերու եւ փոքր քաղաքներու բնակիչ ճնշուած հայ մեծամասնութիւնը:

9. Ընկերա-տնտեսական հոլովոյթ մը պիտի դիտուի 1800էն ետք միայն:

- Տնտեսապէս տկար՝ Թուրքիա կը կատարէ *արդիականացումի վախկոտ փորձեր, մեղմելու համար երոպական ճնշումն ու միջամտութիւնները. բայց «Թանգիմաթ»ի *բարենորոգչական ծրագիրը, ինչպէս յետագայ փորձեր, մինչեւ վերջ ալ բան պիտի չփոխեն հայկական գաւառներու հալածանքներէն ու անապահովութենէն: Որոշ բարելաւում կ'ունենայ միայն մեծ կեդրոններու (Պոլիս, Չմիւռնիա) քրիստոնեաներուն վիճակը:

- Այս երեւոյթի կողքին, միշտ 1800էն ետք, Պոլսոյ եւ Չմիւռնիոյ հայ կեանքի մէջ քիչ-քիչ *բարեկեցիկ ու գործօն կը դառնան առուտորով, *ազատ ասպարէզներով եւ արհեստներով զբաղող խաւերը, իսկ հին ամիրայական խաւը կ'աղքատանայ, կը մեռնի:

- Արեւելեան հայութեան մօտ, նոյն *տասնամեակներուն, *ղրական երեւոյթներ են Երեւանի նահանգի *կցումը ցարական կայսրութեան, եւ Թիֆլիս ու Պաքու քաղաքներու արագ զարգացումը՝ աճող *քաղաքաբնակ հայութեան մը գործօն մասնակցութեամբ:

ՉԱՐԹՕՆՔԻ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹԻՒՆ

Արդէն 18րդ դարու կէսէն (1750), քաղաքական եւ ընկերա-տնտեսական այս հոլովոյթին կընկերանայ մշակութային *խմորում մը: Ատոր համար ալ, 1750-1850 հարիւրամեակը կը նկատենք հայկական ազգային-մշակութային Չարթօնքի նախապատրաստման շրջանը:

Վերը նշուած հայ գաղութները, երոպական *Վերածնունդին ու հետեւող *Լուսատրութեան դարու (շուտով նաեւ Ֆրանսական *Յեղափոխութեան) ազդեցութեան տակ, մասնակցած են այդ երկար պատրաստութեան:

դպրոցներ, գրուիլ ու ներկայացուիլ թատերգութիւններ, կազմուիլ՝ մշակութային եւ այլ տիպի միութիւններ, «ընկերութիւն»ներ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ՝ 1512ԷՆ...

Կիւսեմպերկի գիւտէն հազիւ 50 տարի ետք, 1512ին, Վենետիկէն Պոլիս, Չմիւռնիա, Էջմիածին եւ Հնդկաստան, կը տարածուէր հայկական տպագրութիւնը. *կը ձուլուէին հայերէն տպագրական տառեր, մամուլ-մեքենան կը սկսէր դառնալ: Ուրեմն, անիկա 1750-1800ին բաական զարգացած էր - բայց մնալով առաւելաբար արտասահմանի մէջ: Պատմական Հայաստանի առաջին տպարանը գործել կը սկսի 1854ին...:



Յին մամուլ, Վարազայ վանք

Սկսած է գրաբար լեզուի ուսումնասիրութիւնը. ճամբայ ելած է թարգմանական, ապա ինքնագիր գործերու *հրատարակումը: Մէկ կողմէ՝ լոյս տեսած են առաջին հայերէն թերթերը, միւս կողմէ՝ սկսած են բացուիլ

Ուրեմն, երբ *մարզ առ մարզ կը քննենք 1850ին թափ առած մեր ազգային-մշակութային Չարթօնքը, չենք կրնար անտեսել շարժումին նախապատմութիւնը, այսինքն նախորդող հարիւրամեակի խմորումները:

ՉԱՐԹՕՆՔԻ ՇԱՐԺՈՒՄ. ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԵՐ

1. Լեզու, Գրականութիւն, Պատմութիւն - Հրատարակութիւններ

Ա. 1750էն մինչեւ 1850, լեզուական, գրական, *պատմագիտական եւ տպագրական մարզերուն մէջ, յատուկ կարեւորութիւն ունեն

ցած են Մխիթար Սեբաստացիի 1717ին հիմնած վանքն ու միաբանութիւնը՝ Վենետիկ, Ս. Ղազար կղզիին վրայ:



Անկիւն Մխիթարեան
մատենադարանէն (Ս. Ղազար)

ՄՄԻԹԱՐԵԱՆՆԵՐ ԵՒ Ս. ՂԱԶԱՐԻ ՎԱՆՔԸ

Վենետիկի Ս. Ղազար վանքին մէջ, Մխիթարեան վարդապետներ հաւաքած են հայ հին գրականութեան ձեռագիր գործերը:

Շնորհիւ քառամթերքի ու քերականութեան ուսումնասիրութեան, անոնք վերականգնած են դասական հայերէնը՝ գրաբարը, որ ա՛յ միայն եկեղեցիի մէջ կը գործածուէր, անոր քերականութիւնը, կազմած են ծաւալուն բառարաններ: Եւրոպական գրագէտներէ՝ գործեր թարգմանած են գրաբար, յետոյ նաեւ՝ *աշխարհաբար, սկսած՝ հին յոյն եւ լատին *դասկաններէն: Վարդապետները իրենք եւս գրած են նոյն ոճի գործեր - *դիցագներգութիւն (> ԳԼ 7), քատրոն...: Այս գործերը մեծ մասամբ մեր օրերուն ա՛յ չեն կարդացուիր, բայց կը կազմեն հայ նոր գրականութեան «*Գասական շրջանը»:

Բ. Կանուխէն, 1750ականներէն, մշակութային լուրջ խնդրումներ ունեցած են նաեւ հայութեան արեւելեան գօտիները.-

- Հնդկահայ գաղութը, որ կ'սպարէր ընկերա-մշակութային աւելի զարգացած պայմաններու մէջ, կատարած էր թարգմանութիւններ՝ արեւմտեան նոր, *յառաջդիմական գրագէտներու գործերէն, արտադրած էր ինքնագիր գործեր, եւ նոյնիսկ՝ ազգային *ազատագրութեան հարց դնող քաղաքական երկեր:

- Անդրկովկասի մէջ, նոյն տարիներուն, առանձինը երեւոյթ կազմած էր Սայաթ-Նովան՝ իր բանաստեղծական գործով: Սայաթ Նովան զագաթն է գուսան-աշուղներու բազմադարեան *աւանդութեան մը, որ կու գայ մեր ամենահին պատմութենէն (> Բ. Գիրք):

- Սկսած էր կազմաւորուիլ նաեւ Ռուսիոյ մեծ կեդրոններու հայ մտաւորականութիւնը, բառարաններ գրուած էին, հայոց պատմութեան գործեր հեղինակուած՝ հայերէն եւ ռուսերէն:

Գ. Եւրոպայի մէջ սկսած էին զարգանալ հայագիտական ուսումնքները, երեւցած էին առաջին օտարազգի հայագէտները: Լատիներէնի, իտալերէնի, ֆրանսերէնի թարգմանուած էին հայ դասական հեղինակներ՝ Խորենացի, Շնորհալի, Եղիշէ...: 1798էն՝ Փարիզի մէջ, *համալսարանական մակարդակի վրայ, կը գործէր հայագիտական *ամալիոն:

Դ. 1850ի շուրջ, աւելի զգալի կը դառնան փոփոխութիւնները լեզուի մարզին մէջ: Քիչ-քիչ գտուած՝ խօսակցական լեզուի երկու ճիւղերը իբր գրական լեզու կը փոխարինեն գրաբարը, որուն *վերակենդանացումը անկարելի կ'երեւի ա՛յ: *Արեւմտահայ եւ արեւելահայ *աշխարհաբարներու յաղթանակը կ'ապահովուի շնորհիւ *ուսեալ երիտասարդ մտաւորականներու սերունդի մը՝ Նիկողոս Զօրայեան, Ստեփան Ռսկան, Ստեփանոս Նազարեան, Միք. Նալբանդեան եւ ուրիշներ:

Գրական արեւմտահայերէնը կը ծնէր *համադրութենէ մը՝ Պոլիսի խօսակցական



Յովհաննես Այվազովսքի
Մխիթարեան, հայրերը՝ Ս. Ղազար կղզիին
վրայ, Վենետիկ (1843)

լեզուին եւ արեւմտահայ որոշ հարուստ *գաւառաբառներու միջեւ - յատկապէս՝ Ակն գաւառի: Իսկ արեւելահայերէնը աստիճանաբար կը կազմուէր՝ արարատեան բարբառի եւ Նոր Ջուղայի ու հնդկահայոց խօսակցական լեզուի հիմներուն վրայ:

իրենց տեղը կու տան գործերու, որոնք աւելի կենդանի են ու անկաշկանդ՝ իրենց ձեւով ու նիւթով: Անոնք երբեմն ունին զգացական շեշտ, երբեմն՝ պայքարի, *բանավէճի: Յաճախ, նաեւ կը կապուին *առօրեային կամ հայրենի իրականութեան:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ *ՃՆՆԳՈՅԸ

Աշխարհաբար լեզուի գործածութիւնը նորութիւն չէ. 14րդ դարէն, թերեւս եւ աւելի առաջ, անով գրած էին թէ՛ աշուղներ, եւ թէ՛ բազմաթիւ *մատենագիրներ:

Բայց աշխարհաբարի տարածումը տեղի կ'ունենար պայքարով: Որոշ հոսանքներ, ինչպէս Մխիթարեանները, ջանք կը թափէին ապրեցնելու վերականգնուած գրաբար լեզուն:

Ոմանք կը յուսային, որ նոր լեզուն քիչ-քիչ պիտի մօտենար, միանար գրաբարին: Կը կատարուէր անոր *գտումը, կը գրուէին աշխարհաբար քերականութիւն, բառարան, դասագիրք:

Արեւմտահայ աշխարհաբարի առաջին լուրջ քերականութիւնը պատրաստուած է մխիթարեան վարդապետի մը՝ Հայր Արսէն Այտընեանի կողմէ:



- Աշխարհաբարի տարածումին ու *գրականացումին՝ մեծապէս օգտակար է եղած թատրոնը: Անտղակի օգնած են նաեւ՝ կաթողիկէ եւ աւետարանական *յարանուանութիւններու ստեղծման առթիւ մղուած պայքարը եւ կատարուած *քարոզչութիւնն ու հակաքարոզչութիւնը, որոնք կը գործածէին ժողովուրդի լեզուն:

Ե. 1850ի շուրջ, կը փոխուին գրական *ըմբռնումները, գործերու *որակն ու քանակը:

- Դասական ոճի *հռետորական կամ խրատական ոտանաւորներն ու վիպակները

Սակայն, մեծ մասամբ, անոնք չեն համապատասխաներ գրական յստակ ու մնայուն *չափանիշներու, այսօր ա՛լ չեն գնահատուիր, չեն կարդացուիր: Կան *բացառութիւններ, մնայուն արժէքի տէր էջեր, ինչպէս Հ. Դեւոնդ Ալիշանի որոշ գործերուն մէջ:

- Կը բազմաճան ամէն տեսակի գրական հրատարակութիւններ, ինքնագիր եւ թարգմանութիւն: Աւելի նոր, յառաջդիմական երկեր կը թարգմանուին արեւմտեան ազգերու գրականութիւններէն՝ ֆրանսական, անգլիական, իտալական, ռուսական, ամերիկեան:

2. Պարբերական մամուլ (թերթեր)

Ա. Գիրքերու հրատարակութեան կողքին, ճամբայ ելած էին պարբերաթերթերը. «Ազդարար»՝ 1794ին, Մատրաս. «Դիտակ Բիզանդեան»՝ 1812ին, Պոլիս. «Շտեմարան»՝ 1822ին, Կալկաթա, եւ այլն: Առաջինը՝ գրաբար, միւսները՝ յաջորդաբար Պոլսոյ եւ Նոր Ջուղայի ժողովրդական լեզուով, անշուշտ տակաւին օտար բառերով խառն եւ անմշակ:

- Առաջին այս թերթերը մեծ մասամբ ունեցած են *դաստիարակչական-քարոյախօսական բովանդակութիւն եւ *ոճ:

Բ. 1850ի շուրջ, հրատարակուող թերթերը կը բազմաճան: Պոլիս, Չմիւռնիա եւ Վենետիկ *լոյս տեսնող այս թերթերը, ինչպէս «Մասիս», «Արշալոյս Արարատեան», «Մեղու», «Բազմավէպ», ունին նոր որակ. անոնց լեզուն արդէն բաւական մշակուած արեւմտահայ աշխարհաբարն է:

Նոր որակի այս երեւոյթը, նոյն 1850ական տարիներուն, կը դիտուի նաեւ Արեւելք՝ Հընդկաստանի, Ռուսիոյ եւ Կովկասի մամուլին՝ Կալկաթայի «Ազգասէր»ին, Մոսկուայի «Հիւսիսափայլ»ին կամ Թիֆլիսի «Կռունկ»ին մօտ:

Այս թերթերը, իրաքանչիւրը՝ ըստ իր *գաղափարական դիրքին, կը դնեն հարցեր՝ ազգային-հանրային, *բանասիրական-գրական եւն.: Ու յաճախ պատասխանատու-

թեան խոր զգացումով մը կը քննարկեն զանոնք, միանգամայն առաջարկելով հանրային գործի ու զարգացման նոր ուղղութիւններ:

3. Թատրոն

Առաջին թատերական կտորները, յաճախ կրօնա-բարոյական բնոյթով գործեր, մեծ մասամբ՝ թարգմանութիւն, կը բեմադրուին առաջին դպրոցներուն մէջ կամ շուրջ – Վենետիկ, Չմիտնիա, Պոլիս, ապա՝ Կալկաթա եւ Մատրաս, Թիֆլիս, Նոր Նախիջեւան...

1850ի շուրջ, թատերական շարժումը կը տարածուի. կը բազմանան միութենական ու

դպրոցական թատերախումբերը՝ Վենետիկէն ու Պոլիսէն մինչեւ Մոսկուա, Կովկաս եւ Հնդկաստան:

Բայց մինչեւ 1860-70ական թուականները, թատրոնը պիտի մնայ դպրոցական մակարդակի վրայ ու հետագային գոտ ազգային-դաստիարակչական նպատակներ, գուրկ գեղարուեստական արժէք:

4. Ընկերութիւններ, Դպրոցներ, Դէմքեր

«Ընկերութիւն»ները առաւելաբար մշակութային միութիւններ են, սկսած՝ 1780-90ական թուականներէն: Քանի մը օրինակներ՝ «Արարատեան ընկերութիւնը» Հնդկաստա-

նի մէջ, «Լուսատրչաց եղբայրութիւնը», «Համազգեաց»ը կամ «Հայկական թատերական Ընկերութիւն»ը՝ Պոլիս: Անոնք դրոյրոցներ կը բանան, թատերախումբեր, գրա-



ԵՐԿՈՒ ՕՐԷՆՍԴԻՐ ՎԱՐՉԱԳԷՏՆԵՐ
ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՄԻՆԵԱՆ (1876 - 1819)

«Ազգն իր հին կորուսած լեզուին տեղ ունի այսօր, եթէ ոչ կատարեալ, գէթ բաւական գործածելի արդի լեզու մը, ազգային, զոր շար մարդիկ իրարմէ քիչ փարբերութեամբ կը գրեն, եւ հասարակութիւնը աւելի ու աւելի վարժ ու անուշ կերպով կը խօսի: [Անբնական ու անհնարին է] ամբողջ ազգի մը ռամիկին քանի մը ուսումնականներու հասկցած իր հին լեզուն սովորեցնել... [Պէտք է] ռամիկն խօսած լեզուով գրել»:

ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ (1834 - 1887)

«... Եւ Ազգը՝ առաջին բառն էր, զոր արտասանեցին Պալեան եւ Ռուսինեան, երբ միացան փողերս գրողին հետ»:

«Այդ օրերուն Ազգը վարչութեան պէս բան մը ունէր, լեզուի պէս բան մը, ու դպրոցի պէս բան մը: Սորա շեռն արկին կերպարանել այս երեք բաներն, որ երեք էական պայմաններն են ազգային յառաջդիմութեան: Այս շեռնարկութեանն ծնած Սահմանադրութիւնը, Ուղղախօսութիւնը եւ 1854ի Ուսումնական Խորհուրդը, աւելի երկունք, փրկութիւն եւ զոհողութիւն պարճառած են հեղինակաց, քան [1863ի] Սահմանադրութիւնը...»

«Երբ այնքան փարիներէ ետք մտրուի կը յաճիմ այն ժամանակներուն մէջ, ուր լաւ պատերազմը պատերազմեցանք, ... երբ աչքիս առջեւ կը բերեմ այնքան խոշորնորութիւնը, այնքան սպառնալիքները, այնքան սի ու դողը, այնքան վրասնգը, որոնց մէջէն անցանք, երբ կը յիշեմ վնասներն ալ, զոր ըրինք եւ կրեցինք, զարմանքը կը պատէ զիս ու կ'ըսեմ.- Ի՞նչ վեհ է երկրասարդութիւնը»:



դարաններ կամ հրատարակչություններ կը պահեն, քերթ կը հրատարակեն:

Նոյնպէս 1800էն առաջ սկսած՝ կրթական շարժումը 1820-30էն ետք արագացած է եւ բարեշրջուած: Գպրոցներ բացուած են Վենետիկ, Չմիւռնիա եւ Պոլիս, ու միւս կողմէ՝ Կալկաթա, Մոսկուա, Թիֆլիս, Էջմիածին. յետոյ՝ Երեւան եւ Շուշի:

Կարծէ յիշել քանի մը անուններ. Վենետիկի Մուրատ-Ռափայելեանը, Մոսկուայի Լազարեան ճեմարանը, աւելի ուշ՝ Էջմիածինի ճեմարանը: Իր օրին, կարեւոր դեր կը կատարէ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը. փայլուն այս կրթական հաս-

տատութիւնը, ուրիշ նորութիւններու կարգին, ունի երկսեռ դրութիւն: Իրեն միայն կը հետեւի Չմիւռնիան, որ Մեսրոպեան վարժարանի կողքին՝ պիտի հիմնէ յատուկ աղջկանց Հռիփսիմեանց վարժարանը:

Նոյն 1830ական տարիներուն՝ Պոլսոյ մէջ առաջին գծի կու գան Խասազիդի Ներսէսեան վարժարանը եւ Սկիւտարի Ճեմարանը: Այս վերջինին շուրջ պիտի կազմուի խմբաւորում մը՝ միջին-արիեստատոր խաւէն, որ պիտի լծուի պայքարի՝ ամիրայական «իշխանութեան» դէմ, ու աւելի ետք՝ յանգի Ազգային Սահմանադրութեան իրագործումին:

ԵՐԵՔ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆԵՐ

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԳ ԱԼԻՇԱՆ (1820 - 1901)



«Գրասիրին Հայաստանի մէջ ծաղկիլը գմեզ չի կրնար ազարելի հիմակուան փուշերէն, որ լեզուն է ճամբնուս վրայ... Մեր աննման դիցագուներ եւ քաջերն եւ երեւելի մարդիկը չեն կրնար մեր գերութեան եւ խեղճութեան վիճակը մեզի մոռցնել...»

«Նախնիք այն ապեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման կ'ըլլանք... Մեր ինչ ըլլալը մեզնէ կախուած է. անոնց պարծանքն ու փառքը լոյս մըն են մեր ճամբուն վրայ, քայց մենք պէտք է որ աշուրնիս բանանք ու ոտուրնիս շարժենք...»

Թէ կ'ուզենք հասարակել, մանաւանդ հասարակ, թէ [զէնք ու սուր] ունինք,- պէտք է գործածելով ցուցնենք...»



ԽՈՎՀԱՏՈՒՄ ԱՐՈՎԵԱՆ (1805 - 1848)

«Չեզ են ստում, չեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ չեր արեւին դուրբան, փասք լեզու սովորեցէք, չեր լեզուն, չեր հասարակ դայիմ բռնեցէք: Մէկ դարպակ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարենայ սովորի: Բաս չէ՞ք ուզի, որ դուք էլ գրքեր գրէք, ազգի միջումն անուն քողաք, չեր գրքերն էլ օտար ազգեր քարգմանեն, չեր անունը յաւիտեանս յաւիտեանից մնայ անմահ:

«Ինչքան կ'ուզէ ֆրանցուզերէն, նեմեցերէն գիտենանք, մենք չենք կարող էնպէս բան գրիլ, որ նրանց միջումն անուն ունենայ, չունքի նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ ա, մերն ուրիշ...»

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱՎԵԱՆ (1803 - 1858)



«Չարքի՛ր, ո՛վ մարդ, զարքի՛ր ի քմրական քնոյ մարգ... Չննէա՛ եւ ծանի՛ր զքեզ ինքն, եւ գննէա՛ գայր արարածս ամենայն... Եւ թէ ազար օրէնք եւ ազար կեանք չիցեն նոցա, այնպիսիք ուրեմն համարին ծնեալք ի բանդ եւ մեռանելիք ի բանդի... Ազարութիւն առանց գիտութեան վրանգատոր է ժողովրդեան աշխարհիս այսօրիկ...»

«Մշակն թող հերկիցէ գերկիր իւր... թող քաղաքացիքն գործնականք եւ գիտնականք յարմարեցն գգիտու եւ զարիեսարս իւրեանց ի պիտոյէ մարդկութեան, այնինչ վաճառականքն զաւելորդ այսր երկրի ընդ աւելորդաց այնր երկրի փոխանորդելով զաշխարհ ընդարշակ ի մի դրախար եղանակէն յի անկարօք վայելչութեամբ Եղենայ»:

Չննէա՛- Չննէ՛: - Ծանի՛ր- Ծանչի՛ր: - Չիցեն.- Չեն, չկան: - Բանդ.- Բանդ:

1850ի *նախօրեակին, այս վարժարաններին ելած առաջին սերունդ մը ուսանողներ, մեծ մասամբ՝ համեստ կամ միջին խաւ, պիտի երթան ուսումը շարունակելու արտասահման, երբեմն Իտալիոյ Միսիթարեան վարժարանը, երբեմն՝ ուղղակի Ֆրանսայի կամ Ռուսիոյ համալսարանները: Ապա, իբր նոր մտաւորական ղեկավարութիւն, անոնք պիտի գան ու շարժումը պիտի առաջնորդեն աւելի հեռու, դէպի իր գլխաւոր իրագործումները - աշխարհաբարի վերջնական *որդեգրում,

մամուլի եւ դպրոցներու բարելաւում, գրական մթնոլորտի եւ սերունդի ստեղծումը:

Այս դէմքերը երբեմն ունին աւելի աւանդական կազմաւորում, ինչպէս Միսիթարեաններու աշակերտները - Սկրտ. Պէշիկթաշլեան (> ԳԼ 3), Մատթէոս Մամուրեան, Թովմաս Թերզեան... Երբեմն պիտի ըլլան ուղղակի յեղափոխական մտքեր, ինչպէս Ֆրանսայի կամ Ռուսիոյ (Մոսկուա, Գորպատ) համալսարաններէն անցնողները - Ստեփան Ռս-

ԵՐԵՐ ԱՐՏԱԿԱՐԳ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐՆԵՐ



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՎԱՃԵԱՆ (1831 - 1874)

«... Յիրաւի բախար մը կը համարինք մեզի համար Պ. Նալբանդեանին ի Պոլիս գալուստն ու մեր ճանչոտութիւնը իրեն հետ...»

«Ուրախ ենք դարչեալ մենք ալ, զի Պ. Նալբանդեան մեր մէջը Ռուսիոյ լուսաւորեալ ազգայնոց ներկայացուցչին է եւ անշուշտ իր դարչին պիտի պատմէ իր հայրենակցացը, քէ ինչպէ՛ս հայերը հոս անքուն կը մնան. մեր իղջերն ու ջանքերը անոնց հասկցնելով զանոնք ալ մեզի գործակից ընելու պիտի աշխատի, որպէսզի միեւնոյն հողի վրայ եթէ չկրնանք միանալ, զոնէ միանանք սրտով ու փենջանօք, երկրով ու կրօնքով [գաղթական] հայրս, եւ օր մը աշխարհ փենսէ, քէ հայ ազգ մը կայ, որ քէ եւ ցրուած ու սարանդական, այլ մի է բարոյսպէս եւ անբաժանելի»:

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆ (1825 - 1901)



«Երթամ իմ արիւնք բափեմ, որ այստեղեք եւ ամէն մարդ կարենայ իր քիրտով բուսած պտուղը հանդարտ ուրել, որ այստեղեք եւ նորահաս մանուկներու արփօսքը չորանայ, եւ երբ հաց ուզեն, այս պարասխանը չընդունին. «Հաց չկայ...»»

«... Երթամ աղքատին համար կոռիւմ, որ այստեղեք եւ հասարակային ժառանգէ միշտ չզրկուի եւ իր մասը առնէ: ...Երթամ արիւնք բափեմ, որ միտքը, բարբառը, խիղճը ազատ ըլլան, եւ մարդու ճիրանի փակը չմաշուին... Երթամ կործանեմ այն պարուարները, որ ազգերը իրարմէ կը բաժնեն, իրարու թշնամի կ'ընեն, եւ կ'սրբոյնեն, որ սիրուին, պագնուին իբրեւ համահայր եւ համամայր որդիք՝ ի բնէ սահմանած մի եւ նոյն սիրով ապրելու համար»...



ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ (1814 - 1879)

Կիրակոսը, Մարկոսը կամ Թորոսը [ոնէ հարուստ բարերար] չէ, որ պէտք է օգնէ ժողովրդին...

«Մարդս հարստահարութեան եւ փառապանքի մէջ կորուսել է իր մարդկային արժանատիութեան գիտակցութիւնը, հաւասարուել է հողի հետ. նա դարչել է մի անիրաւունք բան, մի թշուառ խաղալիք անօրէն ու անկարգ իշխանութիւնների շեռքում, մի անպաշտպան զոհ ցաւազարուած հրամայողների կամքի...»

«[Պէտք է նախ մտածել ժողովրդի նիւթական կեանքի բարոյքման մասին]..., որովհետեւ մարդս նախ շնչաւոր է, ապա հոգեւոր, եւ հոգին ամէլ ու գորանալ կարող չէ, եթէ նիւթական պայմանքը պակաս են»:

ՄԵԾ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՄԸ

ԳՐԻԳՈՐ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ (1839 - 1923)



«... Հիւկոյի գիրքը [Թշուառները] իբր լոկ վիպասանութիւն կարդալու եւ հոն դէպքերու, համազոյցներու շարք մը դիպելու չէ: Արդի մարդկային ընկերութեանց անպարանն է այն: Այդպիսի երեւելի խնդիրներ կան անոր մէջ, որք բոլոր Եւրոպայի ուշադրութիւնը գրաւած են, եւ որոնց անլոյծ մնալը ազգերու եւ պետութիւններու մտաբանչութիւն եւ երկիւղ կը պարճառէ անընդհապ:

«Ըստ մեզ՝ ով որ մոլութեան, ոճրագործութեան եւ բշուառութեան բարձմանը կ'աշխատի օրինաւորապէս, սոսիալիստ մէ... եւ կ'ըսենք, թէ մենք եւս սոսիալիստ մենք եւ նուիրական պարտականութիւն մը կ'ապարելու հրաւիրուած կը համարուի այդպիսին.. [Ուզեցին] մեզ ամբաստանել Կրօնական ժողովին առջեւ իբր սոսիալիստ: Մեզի համար գովեստ մէ՛ այդպիսի ամբաստանութիւն մը» (> «Կամուրջներ... Կապեր», Ա., էջ 28):

կան, Նահապետ Ռուսինեան, Խաչատուր Աբովեան (> Բ. Գիրք), Ստեփանոս Նազարեան, Միքայէլ Նալբանդեան (> Գ. 3):

Չարթօսնքի շարժումին մէջ մեծ եղած է եւ՛ առաջին, եւ՛ երկրորդ շարքի *նահվիրաներու դերը. ինչպէս եւ դերը՝ երկու այս խումբերէն դուրս մնացողներու՝ Մեսրոպ Թաղիաղեան, Յարութիւն Սվաճեան, Գր. Օտեան, Գր. Չիլինկիրեան, Հ. Ղեւոնդ Ալիշան (> Բ. Գիրք):

Ասոնք, եւ դեռ այլ դէմքեր, իբր *հասարակաց գիծ ունեցած են յամառ աշխատանքի, պայքարի ու հաւատքի ոգի մը: Անոնք բոլորն ալ, *հրապարակագիր-խմբագիր, ուսուցիչ, բանասէր կամ արուեստագէտ-գրագէտ, բացառիկ լրջութեամբ, պատասխա-

մատութեամբ մասնակցած են նոր հայերէնի գոյգ ճիւղերու եւ նոր գրականութեան ստեղծումին - *գիտակից հայութեան մը ստեղծումին: Անոնք յաճախ իրենց գործունէութեամբ ընդգրկած են այս մարզերէն երկուքը կամ երեքը միաժամանակ (ինչպէս շրջանակով ներկայացուած ինը դէմքերու պարագային): Լաւապէս ըմբռնելով, որ լեզու, գրականութիւն, մշակոյթ՝ հայութեան համար *ինքնահաստատումի անփոխարինելի զէնքեր պիտի ըլլային, աւելի՛ *կենսական՝ քան ուրիշ ժողովուրդներու համար: Փոխարինելով անոր պակասող ազգային-պետական կառոյցները - ու նախապատրաստելով զանոնք:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՅԱՆԳՆԵՐ

1. Ն. Ռուսինեանի եւ Խ. Աբովեանի միտքերուն մէջ (> էջեր 24 եւ 25) մատնանշել-բացատրել - աշխարհաբարի նախընտրութեան *հիմնաւորումը (Ն. Ռուսինեան).
- սեփական, մայրենի լեզուին անփոխարինելիութեան հիմնաւորումը (Խ. Աբովեան):

2. Քննելով Հ. Ղ. Ալիշանէն եւ Յ. Սվաճեանէն մտքերուած միտքերը (> էջեր 25 եւ 26), վերլուծել՝
- Ալիշանի յանձնարարած կեցուածքը՝ ազգային անցեալին համոզեալ.
- Սվաճեանի մտահոգութիւնը եւ յանձնարարութիւնները՝ հայութեան բաժանեալ վիճակին առջեւ:
o Բացատրել, որ այս երկու մտաւորականներու շեշտումները կարելոր ձեւով կը լրացնեն իրար:

3. Մ. Թաղիաղեանէ, Ստ. Ոսկանէ եւ Գր. Չիլինկիրեանէ (> էջեր 25, 26 եւ 27) ներկայացուած միտքերը ի՞նչ ունին **հասարակաց** - ո՞ր ընդհանուր մարզին կը վերաբերին:
- Քանի մը բառով *սահմանել անոնցմէ իւրաքանչիւրին մայր միտքերը, *դրոյթները (օրինակ՝ Թաղիաղեանի շեշտած միտքերէն առաջինը՝ ինքնաճանաչումն է. երկրորդը՝ ...):
- Թաղիաղեանէն վերցուած հատուածին վրայ, նպատակայարմար է կանխապէս կատարել արդի հայերէնի վերածման հաւաքական աշխատանք մը: Նուազ չափով, բայց նոյնպիսի աշխատանքի մը կը կարօտին նաեւ միւս հատուածներէն ոմանք:

4. Անձնական տեսակէտ.- Ինը դէմքերէն՝
- ո՞ր մէկը աւելի՛ այժմեական, աւելի՛ նոր կը թուի ձեզի: Արդարացնել տեսակէտը:
- ո՞ր մէկը աւելի՛ համակրելի, աւելի՛ սիրելի կը ներկայանայ **ձեզի՝ անձնապէս**: Բացատրել նախընտրութիւնը:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Քննել գրականության կապերը ուրիշ արուեստներու հեպ՝ հեպարքրական է անկասկած: Բայց այլապէս կարելոր է քննել կապերը գրական շարժումներու միջեւ. ազգային գրականութիւններու միջեւ:

Թարգմանութիւններ եւ անոնց ճամբով փոխադարձ ազդեցութիւններ՝ մնայուն երևոյթներ են գրականութիւններու պարմութեան մէջ: Անոնք աւելի եւս կարելոր են վերածնութիւն սպրոդ գրականութիւններու համար, ինչպէս 19րդ դարու հայ գրականութեան - արեւմտահայ թէ արեւելահայ:

Հոս՝ քանի մը նմուշներ կրնան միայն զաղափար մը փայլ այն մեծ նպաստին մասին, որ եւրոպական գրականութիւններ ունեցած են հայ գրականութեան զարգացման վրայ (> նաեւ Ժամանակագրական Տախտակներ):



1. ԹՇՈՒԱՌՆԵՐ»
(Վիքթոր Հիլօ)

Վերստին սկսաւ այն զարհուրելի հին կռիւն, որու բազմաթիւ կերպարաններն տեսանք արդէն... Պիէնվընի եպիսկոպոսի իր սրտին մէջ վառած այս լոյսը քանի՛ցս բռնի շլացուցած էր զինք, երբ ինք կը փափաքէր կտրնալ: Քանի՛ անգամ սուտումուտ պատճառաբանութենէ մետք լսած էր իր խղճին բարկալի ձայնը: Եւ իր ահարկու, լուսեղէն, հանդարտ խիղճը, զինք քայքայելէ եւ յօշոտելէ ետք՝ իր վերեւ կանգնած կ'ըսէր. Ե՛րբ արդ ի խաղաղութիւն:

Բայց այն գիշեր Ժան Վալժան զգաց, թէ ա՛յ իր վերջին կռիւը կ'ընէր:

Ներկայուող խնդիրը հետեւեալն էր. ի՞նչ կերպ պիտի վարուէր Գօզէթի եւ Մարիուսի երջանկութեան հետ:

Ինքն էր այս երջանկութիւնը կազմողը... Գօզէթի տունը պիտի մտնէ՞ր հանդարտօրէն:

Առանց բան մ'ըսելու՝ իր անցեալը պիտի խառնէ՞ր այս ապագային: Պիտի գա՞ր հոն, իբր յարգուած հայր, դիմակ մ'առնելով պիտի նստէ՞ր այս լուսաւոր յարկին տակ...:

Թրգմ. Գ. Չիլիսկիրեան, 1865, Զմիւռնիս

Թարգմանուած երկեր, գրագէտներէ անդին, ազդեցութիւն կը գործէին միատրակականութեան եւ ժողովուրդին վրայ՝ ընդհանրապէս: Ա. Արփիարեանի մէկ պարմութեամբ էն կարճ հարուած մը, ահա, կը վկայէ այդ մասին.



ՄԻՄՈՆԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ
(գրուած՝ 1890ի շուրջ)

Տէր Վարդան շատ կը կարդար. օտար լեզուի տեղեակ չէր, բայց ճոխ գրադարան ունէր, ուր կը գտնուէին նաեւ այն վէպերն, որք թարգմանուած են վերջի քսան տարիներուն: Շատ կ'ախորժէր այդ վէպերէն, որոնցմով գաղափար մը կ'առնէր եւրոպական քաղաքակրթութեան եւ մը-տաժողութեան:

Այդ վէպերուն մէջ ամենէն աւելի սիրածն, ու կրնանք ըսել՝ պաշտածը, «Թշուառներ»ն էր: «Թշուառներ»ն թարգմանութեամբ՝ Պ. Գրիգոր Չիլիսկիրեան մեծ փոփոխութիւն ներմուծեց գաղափարներու մէջ: Ժողովուրդի մտքին վրայ խորին տպաւորութիւն սկսանք թողուլ այդ վէպի դիւցազները, իրենց պարզութեամբ ու վեհութեամբ... Պիէնվընի եպիսկոպոսն ու Ժան Վալժան կրնան մտածին տիպարներ ըլլալ, բայց միանգամայն այնքան ներգործել մտքի ու սրտի վրայ... Անոնք Տէր Վարդանի մտատիպարներն եղած էին. որչափ կարդար անոնց կենսագրութիւնը, չէր յազենար:

Այն իրիկուն, վերադառնալով իր պտոյտէն, Տէր Վարդան մտքով կը թափառէր այն սենեկին մէջ, ուր պէտք Ժան Վալժան հոգեմաշ մտատանջութիւններու մէջ ընկողմած, պարտականութիւն մը կատարելու համար, կորուշէր զոհել իր երջանկութիւնն ու կեանքը...: Տէրտէրը հաճոյք կը զգար, թերեւս առանց գիտակցութեան, որ պիտի կրնար նմանող ըլլալ անոր:



**2. «ՊՕՂ
ԵՒ ՎԻՐՊԻՆԻԱ»**
(Պերնարպեհն Կր Սէն-
Փիէռ)

Պօղ եւ Վիրգինիա չունէին ոչ ժամացոյց, ոչ տոմար, ոչ ժամանակագրութիւնք եւ ոչ պատմական եւ իմաստասիրական գրքեր: Իրենց կեանքի պարագաները կը չափէին բնութեան կարգերով. օրուան ժամերը ծառոց ստուերներէն կը ճանչնային, տարւոյն եղանակները՝ ծաղիկներէն ու պտուղներէն, եւ տարիներն՝ իրենց հունձքերէն:

Այս ախորժ պատկերներն իրենց խօսակցութեան վրայ մեծ հրապոյրներ կը սփռէին: Այսպէս, Վիրգինիա կ'ըսէր. «Ճաշելու ժամանակ է, զի պանանեաց ստուերներն իրենց արմատին քով կ'ամփոփուին»: Կամ՝ «Գիշեր կը մօտենայ, քանզի դամոնիք իրենց տերեւները կը գոցեն»:

Երբ մէկն հարցունէր իրեն եւ Պօղոսին տարիքը, կ'ըսէր. «Եղբայրս այն աղբեր քովի մեծ քոքեւոյն տարեկից է, ես՝ փոքրիկին. եւ ծնելէ ի վեր մանկեանիք տասներկու անգամ պտուղ տուին»:

Թրգմ. 1870ի շուրջ, Պոլիս

Զգալի եղած է նաև, յարկապէս՝ արեւելահայ գրագէտներու մօտ, մղիչ դերը ռուսական գրականութեան: Այս պարագային, քարգմանական աշխարհնք կարարած են աւելի գրագէտները իրենք (ինչպէս՝ Յովհ. Թումանեան): Թարգմանուած են չափածոյ թէ արչակ գործեր, երբեմն քարերգութիւններ:

Ռուսական գրականութեան հանդէպ հեղափոխութիւն կը դիպենք նաև արեւմտահայ գրագէտներու մօտ: Վարի քարգմանութիւնը Լեւոն Ծանօթինն է: Աւելի ուշ՝ զայն մամուլէն արտապայած է պոլսահայ դասագիրք մը:



3. «ԿԵԱՆՔԻ ՍԱՅԼԱԿԸ»
(Ալեքսանդր Պոլկին)

Մեր սայլակը սրընթաց
Կը գլտորի սաստկավար.
Ժամանակն է ծերունի
Իր միշտ անխոնջ կառավար:

Առտուն կանուխ երբ կ'ելնենք
Այդ սայլակը գըրաւիչ՝
«Քըշէ՛» կ'ըսենք խենթի պէս
Անգոսնելով ամէն ինչ:

Բայց կէսօր է, յոգնած ենք,
Ճամբան խիստ է մեզ ցնցած,
Ա՛լ վախնալով փոսերէն՝
Կ'ըսենք. «Յիմար, քիչ կամաց»:

Նա կը քըշէ, ինչպէս միշտ,
Եւ մենք վարժած այդ ցնցման՝
Իրիկուան դէմ կը իրիքենք
Մինչեւ հասնինք կայարան:
«Հայրենիք», Պոլիս, 1890ի շուրջ

Հայ նոր գրականութեան մշակներուն հեղափոխութիւնը շար աւելի հեռուները կը հասնի - դեռ իր կեանքի առաջին այդ փասնամեակներուն: Այսպէս, Յ. Թումանեան, ամերիկացի Լոնկֆելլոուի գործով խանդավառ, քարգմանած է ամերիկ-հնդկական ներշնչումով անոր մէկ քերթուածին՝ «Նախերգանք»ը: Հոս՝ քանի մը փող.



**4. «ՀԱՅԱՌԿԱՅԻ
ԵՐԳԸ»**
(Հենրի Լոնկֆելլոու)

Եթէ հարցնէք՝ ո՞րտեղից են
Էս լեզունդներն ու գրոյցներն
Անտառների անուշ բոյրով,
Հովիտների շաղ ու մուժով,
Վիգուամների ոլոր ծուխով,
Մեծ գետերի սահանքներով,
Նրանց անվերջ որոտումով,
Ու վայրենի արձագանքով՝
Ինչպէս ամպրոպ սարերի մէջ,
Ես ձեզ կ'ասեմ, ձեզ կը պատմեմ.-
Անտառներից, հովիտներից,

Նորդլանդիայի մեծ լճերից,
Օջիբուայի խոր աշխարհից,
Դակոտների վայրի երկրից...
Եթէ հարցնէք՝ ո՞ր է գըտել
Էս երգերը Նաուադահան,
Էսքան վայրի ու քմահաճ,-
Ես ձեզ կ'ասեմ, ձեզ կը պատմեմ.-
Թռչունների բընների մէջ,
Ջրշունների խոռոչներում,
Բիզոնների արօտներում,
Արծիւների բնավայրում...

Յառաջիկային, առիթը կ'ունենանք փնտնելու քարգմանական գրականութեան այլ նմուշներ, հին թէ նոր: Նաև ակնարկ մը ներքին՝ հայ գրականութենէ դէպի ա՛յլ լեզուներ քարգմանութիւններու վրայ - կարարուած հայ թէ օտար գրագէտ-քարգմանիչներու կողմէ (> Բ. Գիրք):

Թեկադրանք. - Հետազօտական աշխատանք կատարել՝ վերի բնագիր-գործերէն մէկուն կամ միւսին շուրջ: Ճշդէլ անոր նկարագիրը՝ իբր գրական երկ, իր երկրին մէջ ատենին գտած ընդունելութիւնը, նշանակութիւնը:

3

ՉԱՐԹՕՆՔԻ ՇԱՐԺՈՒՄ

ԳՐԱԿԱՆ ՉԱՐԹՕՆՔ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Մինչև 1870ական տարիներ

ՉԱՐԹՕՆՔԻ ՇԱՐԺՈՒՄԸ՝ 1860ԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

19րդ դարու կեսի իր *հանգրուանին, ուրեմն, հայկական Չարթունքը մեզի կերելի իբր ազգային-մշակութային շարժում:

Ինչպես այլ ժողովուրդներու զարթոնքի *փուլին, հայկական Չարթունքին մեջ ալ՝ գրականութիւնը շարժումին մէկ մասնիկն է, եւ ո՛չ *անջատ գեղարուեստական գործունէ-

Չարթունքի առաջին սերունդին մշակութային վաստակը անկասկած շատ զնահատելի է. բայց կը հասկնանք, որ մինչև 1860ական տարիները՝ այս սերունդէն մնայուն, արժէքատու գրական գործեր մնացած չըլլան գրեթէ:



Արծուերոյն Ձէթունը

ութիւն: Արտադրուած գրական գործերը՝ բանաստեղծութիւն, վէպ, թատերակ, իբր զլիստոր նպատակ ունին դաստիարակել կամ բանավիճիլ, պայքարիլ:

Աւելի կամ նուազ՝ այս պատկերացումը ունին Չարթունքի շարժումին բոլոր գործիչները: Ալիշանէն եւ Պէշիկթաշլեանէն ու Արովեանէն մինչև Մամուրեան եւ Գ. Օտեան՝ անոնք այս մօտեցումով գրած են վէպ ու թատերակ, յօդուած եւ հանդէսի ճառ (> ԳԼ 2):

1860էն մինչև 70ականներու կեսերը, շարժումը կը զարգանայ: Այդ տարիներու կարեւոր երեւոյթներէն՝ յիշենք հետեւեալները.-

- Ձէթունի ինքնապաշտպանական կռիւները, 1862ին, կը ցնցեն հայութիւնը, մանաւանդ Պոլսոյ եւ Չմիւռնիոյ մէջ:

- Պոլսոյ գործիչներուն ջանքերով, 1863ին Օսմանեան պետութեան կողմէ կը վատերացուի երկրի հայութեան ներքին կանոնադրութիւնը՝ «Ազգային Սահմանադրութիւնը»:

- Յատկապէս Պոլիս եւ Չմիւռնիա, մամուլի եւ դպրոցներու առաջընթացը կը շարունակուի. *գրագիտութիւնը եւ *միջնակարգ ուսումը կը տարածուին:

- Արեւմտահայ թատրոնը կ'ունենայ *շլացուցիչ զարգացում: Շուտով, Պետրոս Աղամեան, Սիրանուշ եւ ուրիշ դերասաններ պիտի դառնան՝ հայութենէ անդին՝ ռուսական եւ այլ օտար բեմերու տիրող աստղեր:

- Արեւելահայութեան մօտ, մշակութային շարժումը ցրուած է ու դանդաղ, բայց մտաւորական ուժերը գործօն կը դառնան, շնորհիւ յատկապէս Մոսկուայի «Հիւսիսափայլ»-ին: Անդրկովկասը, հիւսիսի կեդրոններուն հետ կապի մէջ, կը ճանչնայ որոշ զարգացում, մինչ հնդկահայ գաղութը կը սպառի...

- Արեւելահայութիւն եւ արեւմտահայութիւն աւելի ու աւելի *կը ձգտին իրարու մօտենալու, իրար ճանչնալու: Մ. Նալբանդեանի, աւելի ուշ՝ Ծերենցի (> Գ. 4) պէս գործիչներ կ'անցնին Մոսկուայէն Պոլիս, Պոլսէն՝ Թիֆլիս, կը ստեղծեն շարժում, կը տարածեն ազգային միասնութեան գաղափարը:

Սակայն, միւս կողմէ, ազգային-մշակութային շարժումը կը զիտակցի, որ իր գործունէութեան դաշտը շատ սահմանափակ է: Թուրքիոյ մէջ՝

- Ջէթումի ինքնապաշտպանութիւնը կ'արտի կէս-ձախողութեամբ.

- Սահմանադրութիւնը կ'արգիլուի, սպա կրկին կը շնորհուի՝ բայց կրճատուած ձեւով.

- պետական ճնշումները կ'աւելնան, *գրաքննութիւնը՝ նոյնպէս. հայկական թատրոնը կը հանդիպի առաջին արգելքներու:

- Կովկասի մէջ, նոր ծաւալած կրթական-մշակութային շարժումը կը խանգարուի իր կարգին: Կը սկսի *ռուսացման քաղաքա-

կանութիւն մը - ռուսական դպրոցներու տարածում, միութիւններու եւ թերթերու վրայ ճնշումներ...



«Արծիւ Վասպուրականի» թերթի տպարանը, Վարազայ վանք

ԳՐԱԿԱՆ ՇԱՐՇՄԱՆ ՁԵՆԱՌՈՐՈՒՄԸ

Բուն գրական շարժումը կը ձեւաւորուի՝ աստիճանաբար գտնուելով ազգային ընդհանուր շարժումէն, հասունացումի հորվոյթով մը, 1860էն ետք:

Ինքնին բնական՝ այս հորվոյթը ենթակայ եղած է մի քանի *գործօններու.-

1. Չոյզ կայսրութիւններու քաղաքական-մշակութային ճնշումները կը կաշկանդեն գործիչներ ու ժողովուրդ, եւ քիչ մը ազատ կը ձգեն միայն գրականութիւնը՝ իբր ազգային *ինքնութեան «անվնաս» *դրսետրում: Որոշ հին գործիչներ կ'ամփոփուին գրականութեան վրայ. իսկ նորերը՝ Չարթօնքի սերունդի «երկրորդ ալիքի» դէմքերը, արդէն կը կազմաւորուին իբր աւելի գրական դէմքեր:

2. Երոպայէն եկող մշակութային ոճը *վիպապաշտ է, զգացական. իսկ տիրող գրական ձեւը՝ *քնարերգութիւնը:

3. Կրթութեան տարածումը աւելի ու աւելի համեստ խաւեր կը բանայ արեւմտեան մըշակոյթին: *Չքաւորութեան եւ «ազգի վիճակին» կրկնակ տխրութիւնը բնականօրէն պիտի գտնէ վիպապաշտ ոճի արտայայտու-

թիւն մը - զգացական, յաճախ եւ *յոռետես:

3. Գրական շարժման սկզբնաւորումը, Պոլսոյ եւ Չմիւռնիոյ հայութեան մօտ, տեղի կ'ունենայ բաւական արագ: Բուն երկրի հայութիւնը անշուշտ չի կրնար հետեւիլ. եւ ծնող գրականութիւնը մասամբ կ'ըլլայ «քաղաքի գրականութիւն», բայց պահելով հայրենասիրական ուժեղ *լիցք, *սնանելով՝ գաւառէն:

4. Արեւելահայութեան մէջ, շարժումը կը սկսի աւելի դանդաղ - Մոսկուայէն՝ Թիֆլիս, սպա՝ Շուշի, Երեւան ու գաւառական այլ կեդրոններ: Քաղաքական տանելի պայմաններ, գաւառի հետ մօտիկութիւն եւ ազատ կապ՝ արեւելահայ գրականութեան կու տան *բնաշխարհի, «հողի գրականութեան» կնիք:

* * *

Կը հետեւին նմուշներ՝ Չարթօնքի սերունդի բանաստեղծական գործէն, խմբուած երեք բնաբաններու մէջ՝ Մարդկային Հոգի եւ Բնութիւն. Կեանք եւ Մահ. Ազգ, Հայրենիք, Պայքար: Բնաբաններ՝ որոնք 1860-70ին մեր մէջ ունին յստակ վիպապաշտ ձեւաւորում:

I. ՄԱՐԴԱՅԻՆ ՀՈԳԻ ԵՒ ԲՆՈՒԹԻՒՆ



Սկրտիչ Պէշիկթաշլեան օ 1828-1868

Ծնած է Պոլիս, կաթողիկէ աղքատ ընտանիքի մէջ: Հայրն ու մայրը շատ կանուխէն մահացած են թոքախտէ:

Նախակրթութիւն ստացած է Մխիթարեաններու Պոլսոյ եւ ապա՝ Փատովայի (Իտալիա) վարժարաններուն մէջ:

Կազմաւորուած երիտասարդ՝ 1845ին դարձած է ծննդավայր: Թաղային վարժարաններու մէջ ուսուցչութեան կողքին, մասնաւոր դասերու շնորհիւ՝ յաջողած է մայրենի լեզուի սեր եւ ազգային ոգի ներշնչել բարեկեցիկ բայց օտարախօս շրջանակներու երիտասարդութեան:

Ազգային մշակոյթի եւ գի, տակցութեան այս խանդավառ բարոզչութիւնը արդիւնաւորուած է իր բազմաթիւ աշակերտներէն՝ հայ գրականութեան պատմութիւնը

պահած է անունը Սրբուհի Վահանեանի, որ իւրացուցած է իր ուսուցիչին տեսիլներն ու հայերէնի եւ գրականութեան սէրը, եւ աւելի ուշ ճանչցուած է իբր վիպագիր Սրբուհի Տիւսար:

Չգայուն եւ փայլուն այս աշակերտուիլին՝ երիտասարդ ուսուցիչ-գրագէտը կապուած է եղած նաեւ զգացումներով: Բայց կապը, թէեւ փոխադարձուած, անյոյս էր. Սըրբուհին կը պատկանէր հարուստ ընտանիքի, իսկ Պէշիկթաշլեան՝ աղքատ էր ու առողջութեամբ՝ փափուկ:

Աւելի ետք, թոքախտով հիւանդացած եւ մահամերձ, բանաստեղծը իր այս կապին պիտի նուիրէ իր գեղեցկագոյն բանաստեղծութիւնները, գրաբարով:

Ուսուցչական գործունէութեան կողքին, Պէշիկթաշլեան բուն թափով նուիրուած է եղած միութեանական աշխատանքներու: Հիմնադիրներէն է եղած «Համազգեաց ընկերութեան», որ պիտի ունենար կրթական-հրատարակչական լայն գործունէութիւն, ջանալով նաեւ միասնութիւն ստեղծել հայութեան հատուածներուն միջեւ:

Իբր կաթողիկէ համայնքի անդամ, Պէշիկթաշլեան անասհման հաւատքով ու՝ *գոհաբերումով գործած է վերացնելու համար ազգային լուսաւորչական եկեղեցիին հետ շարունակուող *պառակտիչ վէճերը: Իրեն համար մնայուն հաւատք ու ապրում է եղած համահայկական եղբայրութիւնը: Երգած է նաեւ Չէյթունի բաջ ժողովուրդի զինեալ պայքարը:

Պէշիկթաշլեան տակաւին ունի վաստակ արեւմտահայ թատրոնի զարգացման մէջ, եւ իբր թատերախումբի հիմնադիր, եւ իբր թատերագիր:

Եղած է յարգուած ու սիրուած դէմք: Իր բարութիւնը, ջերմութիւնը, հայրենասէր ու մարդասէր նուիրեալի պատկերը, իր կեանքի պատմութենէն ու իր գործէն աւանդուած, մեզ կը յուզեն մինչեւ այսօր:

Մահացած է թոքախտէ: Թաղուած է Պոլիս, Շիշլիի հայոց գերեզմանատունը:

Գործը՝

- «Տաղք եւ Թարերգութիւնք» (Պոլիս, 1870 - ա. տպագրութիւն):

Ա. ԳԱՐՈՒՆ

1

Մ. Պէշիկթաշլեանի համար, մարդ եւ աշխարհ սերտօրէն կապուած են բնութեան հետ: Բնութիւնը կը դառնայ փոխանիփոխ խորհրդանշանը կեանքի ինքնանորոգման ուժին. 'սպաւէնը կամ՝ ցաւակիցը նահապարագիբին դէմ:

«Գարուն»ի մէջ, կը բռնենք վիպապաշտ այս զգայնութիւնը՝ թարմութիւն, զարնանային գեղեցկութեան սէր,՝ քնքշանքի կարօտ. «զգացումներ երգելու» այն գրական հիմնական շեւը, որ քնարերգութիւնն է (> Գլ. 10): Նոյնիսկ եթէ դժբախտ հայրենիքի մը սուգին ճնշումը կու գայ մոռցնելու զարունը, եւ անշնական երջանկութեան անոր հրաւերը:

Հայրենի սուգի այս՝ սրանշնունը եւս, կը զգանք, կնքուած է Չարթօնքի սերունդի թարմ զգայնութեամբ, քնարականութեամբ:

- 1. Արարողնէ:
- 2. Հեռու, անդին:
- 3. Փափուկ, քաղցր:
- 4. Անբարձիւն մէջ (նախադասութեան ենթակաւն՝ ժամերն):

Ո՛հ, ի՛նչ անուշ եւ ինչպէ՛ս զով
Առաւօտուց՝¹ փչես, հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,
Գնա՛, անցի՛ր սրտէս ի բաց՝²

Ո՛հ, ի՛նչ աղու՛³ եւ սրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնի՛կ.
Սիրոյ ժամերն ի յանտառին՝⁴
Ըղմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա՛, երգէ՛ սրտէս ի բաց:

Ո՛հ, ի՛նչ մըմունջ հանես, վտակ Ականակիտ⁵ ու հանդարտիկ. Քու հայելույդ մէջ անապակ⁵ Նային գիրենք⁶ վարդն ու աղջիկ. Բայց չես վտակ իմ Հայրենեաց, Գնա՛, հոսէ՛ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց Աւերակաց շրջին վերայ, Թէպէտ պղտոր վտակն Հայոց Նոճիներու մէջ կը սողայ, Նոքա հառա՛չք են Հայրենեաց, Նոքա չերթան սրտէս ի բաց:

5. Վճիտ, մաքուր:
6. Իրենք զիրենք

ՀԱՍԿՆԱԼ ՀԱՏՈՒԱԾԸ

1. Որո՞նք են բանաստեղծին անմիջական շրջապատին իրերն ու իրականությունները, որոնք՝ ա., բ. եւ գ. տուներուն մէջ՝ կը թելադրեն բնութեան գեղեցկութիւնը:

- Քնարերգական լեզուի ո՞ր տարրերով կը շեշտուի այս թելադրանքը:

2. *Նշել լեզուական տարրերը, որոնք նոյն տուներուն մէջ՝ կը ստեղծեն քնքշանքի, սիրոյ մթնոլորտ:

3. Նշել բանաստեղծին կեցուածքին շրջումը՝ նոյն տուներուն վերջին տողերուն մէջ. ի՞նչ բառով արտայայտուած է այդ շրջումը. եւ ի՞նչ է անոր հիմնաւորումը:

4. Բանաստեղծը վերջին տունի վերջին երկու տողերը դրած է իբրեւ ՝հակադիր զուգահեռ՝ նախորդ տունները փակող տողերուն: Ճիշդ ո՞ր բառերը կը կազմեն այդ հակադիր զուգահեռը:



Վիմագրութիւն 19րդ դարու Վոսփոր
«Բայց չես հովիկ իմ հայրենեաց...»

Վկայութիւն

Մ. ՊԷՇԻԿՍԻԱՆԻ ԳՈՐԾԻՆ Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՉԱՐԱՆԷՆ (ԾԵՐԵՆՅ)

«Այս համառօտ յառաջաբանը գրողները կը փափաքին վեր ըլլալ այն տղայական եռանդէն, որ գրական գործ մը հանրութեան ներկայացնելուն՝ ծաղիկներով, դափնիներով կը պսակէ զանի...»

«Գործը ինքը կը խօսի եւ քննադատը կը դատէ...»

«Բայց հեղինակին վրայ խօսելու փափաք ունէինք. մանաւանդ որ զինք առաքինի, համեստ, անշահասէր եւ ճշմարտախոյզ անձ մը ճանչցեր էինք... Տեսեր էինք զինք վարժապետ, առաջիններէն մէկը՝ որ իր պաշտօնին վայլած պարհուր պահեց. եւ իրմէ վեր բախարով եղած մարդկանց բարեկամութիւնը գրատեց...»

«Տարի մը ու անլի ժամանակ, երբ հիւանդութիւնը, որ զինք գերեզման պիտի իջեցնէր, անկողնին գամած էր, գրեթէ միշտ շրջապատեալ իր բարեկամներէն՝ աշակերտակիցներէն ու աշակերտներէն, կեդրոն մը եղած էր ազգային հանճարոյն:

«Հոն կը տեսնուէին շարունակ իր մտերիմ բարեկամը Գ. Օրեան էֆէնդին եւ այլք [անուններ], Տոքթորներ [անուններ], Տիարք, Տիկնայք եւ Օրիորդք յարգոյ ընտանեաց [անուններ], եւ այլն, եւ այլն, որոնց մէջ անլի գորովալից եւ ազնուական շեռքեր ջանացին խեղճին վիշտերը սփոփելու...»:



Պետրոս Դուրեան օ 1851- 1872

ստիպուի ձգել *գրագիրի իր գործը: Կը շարունակէ գրելը, որ սկսած էր աշակերտական գրասեղաններէն. իր վիպապաշտ թատերգութիւնները արդէն բեմադրուած էին՝ թատերական այդ բուն գործունէութեան շրջանին, ընդունելութիւն գտնելով:

Պահ մը ունեցած է բեմական գործունէութիւն. սիրուած է իբր դերասան (մինչ արդէն համակրանք կը վայելէր Պոլսոյ ուսեալ երիտասարդութեան մօտ շնորհիւ իր բանաստեղծութիւններուն եւ ազնիւ ու եռանդուն նկարագիրին): Միայն վերջին մէկ-երկու տարին է որ, հիւանդութենէն ընկճուած, պիտի դառնար տխուր ու մռայլ:

Խնամքի պակասն ու չքաւորութիւնը արդէն տեղ պատրաստած էին թոքախտին՝ իր տկար մարմինին մէջ: 1870էն՝ առողջական վիճակը

կը ծանրանայ. ու հագիւ մէկ տարի անցած, Պ. Դուրեան կը մահանայ՝ հիւանդութենէն հիւծած:

Սկիւտարի երիտասարդութիւնը, յարգանքի վերջին տուրք մը տալու համար սիրուած բանաստեղծին, կազմակերպած է շքեղ յուղարկաւորութիւն մը: Սկիւտարի գերեզմանատունը, ուր թաղուած է Դուրեան, շուտով դարձած է երիտասարդներու *ուխտավայր:

Դուրեանի *տապանագիրը գրուած է իր եղբօր՝ Միհրանի կողմէ, որ յետագային պիտի ըլլար ծանօթ հոգեւորական եւ իր կարգին՝ բանաստեղծ:

Գործը՝

«Տաղը եւ Թարերգութիւնը», (Պոլիս, 1872 - ա. տպ.):

Ծնած է Պոլիս, համեստ բայց մշակոյթով հարուստ Սկիւտար *արուարձանը, երկաթագործի ընտանիքի մէջ: Հօրը Չմպայեան մականունը ինք հայացուցած է՝ վերածելով Դուրեանի:

Սկիւտարի ճեմարանին մէջ, ուսուցիչ ունեցած է Յ. Պարոնեանը: 1868ին, ճեմարանը հագիւ աւարտած, կը նետուի գործի ասպարէզ՝ ընտանիքին օգնելու համար. բայց վատառողջ ըլլալով՝ կը

1. ՍԱՐԴԱՅԻՆ ՅՈԳԻ ԵՒ ԲՆՈՒԹԻՒՆ

Բ. ԼՃԱԿ

2

Պ. Դուրեանի շար սիրուած, կարդացուած այս էջին՝ «Լճակ»ին մէջ, պայտանի բանաստեղծը որդեգրած է բնութեան հեղ գրուցելու այն ոճը, ծանօթ պարկերաները, *համեմատութիւնները, որոնք յարուկ էին իր ժամանակի գրական ասանդութեան:

Սակայն «Լճակ»ը պարզ մէկ կրկնութիւնը չէ՝ ժամանակի գրական շեւերուն (կամ նոյն նիւթով այս կամ այն երոսպական վիպապաշտ քերթուածին): Իր երկրորդ կէտով յարկապէս, անհկա մեզ կը դնէ շար ինքնուրոյն, *արտանմանիկ պարզութեամբ պարմուած անշնական *ողբերգութեան մը առջեւ. ողբերգութիւնը՝ հիւանդութեան ու թշուառութեան, հասկցուած եւ ընդունուած չըլլալու...:

**Ինչո՞ւ ապշած ես, լճակ,
Ու չեն խայտար քու պեկերդ.
Միթէ հայլուոյդ մէջ անձկաւ՝
Գեղուհի՞ մը նայեցաւ:**

**Այլ՜ եթէ գողդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկընքին
Նրմանիլ չես կրնար դուն
Հողուոյս, որ է բոց անհո՛ւն:**

- 1. Անշնութեամբ:
- 2. Լոյսէ ծաղիկներ ունեցող:
- 3. Գրատուի: Իսկ սիրեմը դրուած է կը սիրեմի տեղ:
- 4. Բայց:
- 5. Որովհետեւ նոյնիսկ եթէ...

**Եւ կամ միթէ կը զմայլե՞ն
Ալեակքդ երկնի կապոյտին
Եւ այն ամպոց լուսափթիթ՝,
Որք նրմանին փրփուրիդ:**

**Լճակ, դու ես թագուհիս:
Զի թ՛հոյէ մ'ալ խորշոմիս՝,
Դարձեալ խորքիդ մէջ խրոող
Զիս կը պահես դողդալով:**

**Մելամաղձոտ լճակ իմ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ,
Միրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ՝, լռել ու խոկալ:**

**Շատերը դիս մերժեցին,
«Քրնար մ'ունի սոսկ», - ըսին.
Մին՝ «Դողդոջ է, գոյն չունի»:
Միւսն ալ ըսաւ՝ «Կը մեռնի»:**

**Որքա՞ն ունիս դու ալի՜
Ճակատս այնքան խոկ ունի.
Որքա՞ն ունիս դու փրփուր՝
Միրտս այնքան խոց ունի բիւր:**

**Ոչ որ ըսաւ. «Հէ՛ք տրդայ,
Արդեօք ինչո՞ւ կը մխայ.
Թերեւս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ՝ չմեռնի»:**



Ոչ ոք ըստւ. «Սա տղին
Պատռենք սիրտը տրտմագին.
Նայինք ինչե՛ր գրուած կան...»
- Հոն հրդեհ կայ, ոչ մատեան⁶,

Հոն կայ մոխիր... յիշատակ...
Այեակքդ յուզին թող, լըճակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ...

6. Գիրք:

ՀԱՍԿՆԱԼ ՀԱՏՈՒԾՈՆ

1. Յոյց տալ, որ բանաստեղծը «կը գրուցէ» միւթ միւթ անցնելով: Ճշդէլ իրարու կապուող այս երեք յաջորդական միւթերը (տուներ 1-2, 3-4 եւ 5-6), եւ ըսել, թէ գրուցողներու «յարաբերութիւնը» ինչ ձեւով քիչ-քիչ կը փոփոխուի:

2. Բանաստեղծը լճակին «պատկեր պահելու»

կարողութիւնը (Յոյ տուն) ինչպէ՞ս կը գործածէ քիչ մը վար - ինչի՞ հակադրելու համար զայն:

3. Ի՞նչ պատմութիւն կ'ամփոփեն 7րդ, 8րդ եւ 9րդ տուները (9րդէն՝ միայն երեք տող). թուել՝ ինչ պակասներէ տառապած է բանաստեղծը: Մըժեւորել «հրդեհ», «մատեան», «մոխիր» բառերը:

ԲՆԱԲԱՆ 1. ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Երկու գործերէն նախ արտագրել բնութեան վերաբերող այն տարրերը, որոնք հասարակաց են երկուքին, եւ կը նշեն «բնութիւնը զգալու» այդ ժամանակի (վիպապաշտ) ձեւը:

- Ապա արտագրել այն տարրերը, որոնք կը տարբերին մէկէն միւսը, կը նշեն զգալու զուտ անձնական ձեւեր:

2. Ընտրել Մ. Պէշկոպաշլեանի եւ Պ. Դուրեանի քերթուածներէն՝ 3-4 փոխաբերութիւններ, անոնք՝ որոնք ամենէն աւելի կը տպաւորեն ձեզ: Մեկնաբանել զանոնք:

II. ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ

Պետրոս Դուրեան

Ա. ՀԵԾԵԾՄՈՒՆԵՐ

. Դուրեանի զլիատր ողբերգութիւնը՝ իր հիւանդութիւնը, զինք փառապեցուցած է նաեւ իրմէ դուրս, իրմէ առաջ հարուստներով իր մտերիմ մէկ բարեկամը՝ Վարդան Լուքսեանը, իրեն պէս զգայուն, բանաստեղծ հոգի մը:

Դուրեան հոս կը խօսի իր մահացած բարեկամին՝ այնքան պարզ ու բնական, կարծես ան իր քովը ըլլար... Եւ՝ ոգեկոչելէ ետք իրենց միասին ապրած պահերը, ապա՝ անոր մահն ու իր ցարը,- բանաստեղծը անզամ մը եւս իր հարցականները կ'ըսէ՝ հանդերձեալ կեանքի մասին..

3

**Ո՛հ, երկնքի ժապաւէններ՝
ճառագայթներ՝ միացուցած
էին սրտերը մեր միմեանց¹,
Մեր սրտերը սիրանուէր:**

**Նոքա միմեանց Համար քանի
էին անհուն բաց մատեաններ.
Հո՛ն ամէն բառ խորք մը ունէր
Իր ներքեւը սիրոյ, ցաւի:**

**Ո՛հ, կը յիշե՞ս, Չամլըճայի
Սարը² նստած լուռ մխայիւնք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սեւ հովանոցք վշտահարի:**

**Ստամպոլի կապոյտ գօտուոյն՝
Վոսփորի ծուփը³ դիտէինք,
Ուսկից եւ մերթ զանամպ երկինք⁴...
Ո՛, ակորժներ⁵ լուռ մեր հոգուոյն:**

**Զէինք խօսեր, խօսքն մեր հոգուոց
Անհունութիւնը կը պղծէր.
Մենք՝ զերթ⁶ երկու տժգոյն բոցեր՝
Իրարու մէջ կ'այրէինք սոսկ:**

**Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում.
Սեւ ծծէինք, սո՛ւզ անհատնում...
Նայէինք միշտ երկրէս Հեռու:**

1. Սրտերը լոյսով («երկինքի ժապաւէն»)
2. Լեռ՝ Պոլսոյ մօտ:
3. Չորի շարժում, ծփանք:
4. Կը դիպէինք անամպ երկինքը:
5. Միրած բաները:
6. (Երկու բոցերու) պէս:



- 7. Քեզ կշտացուց:
- 8. Մէջս գամեց:
- 9. Հրեշտակի:
- 10. Այսօր իսկ կը բօքուն կեանքս՝ հոգիիս հին հագուստը:

Անյուսուլթին, գերեզմանի
Այդ սեւ կաթը շատ ըմպեցինք.
Քեզ յափրացուց՝ այդ ըմպելիք,
Եղար երկնից տժգոյն որդի:

Քու դալուկըդ դիս ցաւցուց շատ.
Եւ նայուածքդ վերջին նուաղ՝
Զոր ուղղեցիր ինձի, աւանդ,
Բեւեռացուց յիս՝ յիշատակդ:

Երջանի՞կ ես հող, թէ՞ թշուառ,
Զուարթնոյ՞ թեւով լո՛ւր մ'ինձ դրկէ.
Ա՛հ, այս աշխարհս միշտ տաղտո՛ւկ է...
Ցաւերու մեծ մայր մ'է աշխարհ:

Ա՛հ, եթէ հող ծառի մը շուք
Կայ եւ նորա քով մէկ վտակ,
Եթէ կայ հող սէր անապա՛կ,
Կա՛ն ազատ օդ, ազատուլթիւնք,-

Ահ, կը թօթուեմ ես այս աղտոտ
Զորձն հողւոյս՝ կեանքս՝ մինչ իսկ այսօր¹⁰,
Հող կը հագնիմ, հո՛ղ սրգաւոր...
Ահ, ուղածներս, վարդան, կա՞ն հող...

ՀԱՍԿՆԱԼ ՀԱՏՈՒԱԾԸ

1. Արտագրել հնաբանութիւնները (լեզուական հին ձեւեր) - բառեր, քերականական կառոյցներ:
2. Դուրեան ո՞ր բառերով կը բնորոշէ «միւս» կեանքին մէջ սպասած արժեքները, որ չէ գը- տած հոս: Ինչպիսի՞ արժեքներ, ի՞նչ մարզի պատկանող:
3. Արտագրել քերթուածին այն տարրերը, որոնք բարեկամութեան ըմբռնումը կը կազմեն Դուրեանի մօտ:

II. ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՅ

Բ. ԻՆՉ ԿՐՍԵՆ

4

Բանասարեղծին զանգարը, որ լսուեցաւ «Լճակ»-ին մէջ, հոս կը կրկնուի աւելի կիրուկ եւ ուժգին, աւելի կեդրոնացած մահուան յանձնարարական վրայ:

Ուրիշներէ եկած դիպրոպութիւններու շեւով («Ինձի կ'ըսեն»...), բանասարեղծը երեք քառեակներու մէջ կը նկարագրէ կեանքի իր կեցուածքները, վարմունքը: Ապա կու տայ իր բացարձակութիւնները, կապուած՝ իր դժբախտութեան, կամ իր «ըլլալու շեւին», հոգեկան խոր իրականութեան: Բացարձակութիւններ՝ որ պիտի վերլուծենք:

Իսկ վերջին քառեակը բանասարեղծին ներքին գրոյցն է, ուր կը հիստորիկ զոյգ թեմաներ, հարցումներ՝ յաւերժօրէն մարդկային, բայց իր ժամանակի զգայնութեան կնիքով դրոշմուած...

1. Որովհետեւ

Ինձի կ'ըսեն. «Ինչո՞ւ լուռ ես»:
- Ո՛հ, միթէ բառ կամ խօսք ունի՞ր
Արշալոյսը, որ կը բռնկի,
Զի՛ անհուն է այն ալ ինձ պէս:

Ինձի կ'ըսեն. «Միշտ տրխտըր ես»:
- Ինչպէ՞ս չըլլամ. մէկիկ-մէկիկ
Թօթափեցան գլխուս աստղիկը...
Արշալոյս մը շանցաւ սրտէս:

Վկայութիւն

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԴՈՒՐԵԱՆԻՆ՝ ՔԱՌՈՐԴ ԴԱՐԵՏՔ

(ԶԱՊԷԼ ԵՄԱՅԵԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ)

«Այդ օրերուն, մեր կողքի Կոնստանտինոպոլիսի վարչապետներէն էին: Իրենց տղան՝ Միհրանը, իմ ուշադրութիւնս գրասեղ, որովհետեւ մօրաքոյրներս ըսին, որ Կոնստանտինոպոլիսի կերպով կը նմանէր Զմպայեանց Պետրոսին (Պետրոս Դուրեանին):

«Շուրթով չեւր գրանք բարեկամանալու: Գիրքեր փոխ կու տայինք իրարու եւ կը խօսէինք մեր ընթերցումներուն վրայ:

«Մեր տեսակցութիւնները տեղի կ'ունենային պարտէզի կողմի պարզգամին վրայ, որ բաժնուած էր ցանկապարով մը: Միհրան ամէն քանի վեր կը դասէր Դուրեանի բանասարեղծութիւնները եւ երբեմն կ'արտասանէր յուշումով եւ զգացումով: Եւ ես՝ մտածելով Դուրեանին՝ կը նայէի իր կամարաշէտ յօնքերուն, իր տժգոյն նակարին վրայ: Մեր պատմական սէրը կը կայանար [այսքանին մէջ]:»

Ինձի կ'ըսեն. «Կրակոտ չես.
 Լճակի մը պէս ես մեռած,
 Դայկահար՝ դէմքդ ու հայեցումը՝»:
 - Ո՛հ, յատակն են իմ փրփուրներս...

Ես ինձ կ'ըսեմ. «Ժամդ է հասեր.
 Քու երկրորդ սեւ մօրդ գընա՛ գոգ՝³
 Գերեզմա՛ն, հոն գտնես դու գոգ՝⁴
 Վարդեր, թրթուս, թռիչ ու աստղեր...»

2. Նայումք(դ):
3. Գիրկ:
4. Թերևս:



Պետրոս Դուրեանի դամբարանը, Սկիւտարի գերեզմանատան մէջ

ՀԱՍԿՆԱԼ ՀԱՏՈՒԱԾՆ

1. Ա. եւ գ. քառեակներու մէջ. նշել բանաստեղծին «պատասխանները» իր նկարագիրը, իր էութիւնը լուսաբանող: Բանալի-բառեր են «անհուն» եւ «յատակ» (տող 4 եւ տող 12):
2. Բանաստեղծը բնութեան ո՞ր տարրերը համեմատութեան եզր դարձուցած է: Լեզուական ի՞նչ միջոցներով (ածական, եւն) զանոնք կը վերածէ իր զգայնութեան արտայայտիչներուն:
3. Ի՞նչ հակադրութիւն կը ստեղծուի գերեզմանի պատկերին շուրջ. իրարու հիւսուող ո՞ր երկու թեմաներով:
 - Թեմաներէն երկրորդը վստահութեամբ մը քննադատի մէջ կը հասնի մեզի. ո՞ր փոքր բառէն կը ծնին կասկած ու անորոշութիւն:

ԲՆԱԲԱՆ II. ՀԱՄԱԴՐԱՎԱՆ ՀՐԱՅԱՆԳՆԵՐ

1. Վերադառնալ երկու քերթուածներուն. անոնցմէ արտահանել տարրերը, որոնք կը վերաբերին մահուան: Հաւաքուածը համադրել՝ ամփոփ աշխատանքի ձեւին տակ. «Մահը՝ Պ. Դուրեանի քերթողութեան մէջ»:
2. Կարդալ Զ. Եսայեանի «Վկայութիւն»ը, այս էջին վրայ: Գտնել հոգեկան-զգացական տարրերը, որոնք այս աղջիկը եւ այս պատանին կը մօտեցնեն Պետրոս Դուրեանին:
3. Կարդալ Յակոբ Օշականի «Վկայութիւն»ը (> էջ 39). ջանալ հասկնալ եւ ձեր բառերով բացատրել անոր վերջին երկու պարբերութիւնները - յատկապէս՝ սա երկու արտայայտութիւնները.- «Դուրեան անվերածելի բանաստեղծութիւնն էր, ողբերգութիւնը», եւ «անոնց վրայ խօսիլ՝ ապրիլ է ինձի»:

«Եւ օր մըն ալ նախաշեռնարկ եղայ այցելութիւն մը կազմակերպելու Դուրեանի շիրիմին:
 «Երբ Դուրեանի շիրիմին հասանք, մինակ էինք: Միտրան այնքան տխուր էր, որ վահիցայ, թէ պիտի հիւանդանայ: Մեղմօրէն շեռքը առի եւ սեղմեցի՝ զինք պաշտպանելու համար իր տկարութեան դէմ: Յետոյ մոռցայ ամէն ինչ եւ ուժգնօրէն քափանցուցայ Դուրեանի յիշարակով...
 «Շքեղ վերջալոյս մը իր բոցավառ շողերով խորքը կը կազմէր մեր այդ պահու յուզումին...
 «Հեղափոխութիւնը երկրասարդներ ալ եկան եւ առա-

ջին թույլներու վարանումէն ետք հաղորդակցութիւն հաստատուեցաւ մեր մէջ: Խումբով կանգնած վաղա՛մեռիկ բանաստեղծի շիրիմին առաջ, նոյն տրամադրութեամբ վարակուած, խորասուզուեցանք մտածմունքներու եւ երազանքի մէջ:
 «Յետագային յամախ գացեր եմ այցելութեան Դուրեանի շիրիմին, եւ միշտ այնպէս գրեք եւ առանձին կամ խումբով երկրասարդներ: Այդ շիրիմը իմ ժամանակի եւ հետեւեալ սերունդի երկրասարդներուն ուխտարեղին էր...»
 «Միլիիարի Պարտեզները»

III. ԱԶԳ, ՀԱՅՐԵՆԻՔ, ՊԱՅՔԱՐ

Սկրտիչ Պէշիկթաշլեան

Ա. ԵՂՔԱՅԻՐ ԵՄՔ ՄԵՔ...

5

Ազգային միութեան սրեղծումը, 19րդ դարու կէսին, հայութեան հիմնական խրնդիրը եղած է: Միասնութեան թեման մամուլի եւ գրական գործերու նիւթ դարչնուած է՝ յաղթահարելու համար թէ՛ աշխարհագրական ցրտումը, թէ՛ կաթողիկէ եւ բողոքական՝ համայնքներու սրեղծումով ծագած յարսնուանական պառակտումները:

Կաթողիկէ ընդհանրի զաւակ՝ Մ. Պէշիկթաշլեան առաջին ու զլիսաւոր քարոզիչ-գործիչներէն պիտի ըլլար՝ այս բաժանումներու յաղթահարման մասերուն վրայ:

«Եղբայր եմք մեք»ը կը ցուցահանէ Մ. Պէշիկթաշլեանի՝ գորովալի հոգին: Այս իսկական «հաւարամք»ին մէջ, սն բարչրագոյն արժէք ու իրէալ կը յայտարարէ իր նմանին, ազգակիցին սէրը: Թէեւ օրոտան վիպապաշտ ոճով ու շար ընդհանուր բանաշեուած, հոն տեղ գրած է նաեւ բանասրեղծին պարկերացումը՝ միութեան սրեղծման կերպին ու բարերար հետեանքներուն մասին:

- 1. Բնութեան գեղեցիկ չայներուն մէջ:
- 2. Հոս՝ փափաքելի, սիրելի:
- 3. Փոթորիկով:
- 4. Ասրդերուն տակ
- 5. Որդիները:
- 6. Բուժուին (ենթակայ վեր-քը՝ յոգնակի):
- 7. Արցունքը:
- 8. Ձանք, միգ:
- 9. Բարիքներուն արդիւնքը:

Ի բիւր ձայնից բնութեան՝ չքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատուք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,
Չունին ձայն մի այնքան սիրուն
Քան զանձկալի՝¹ Եղբայր անուն:

Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնէ գորդիս՝⁵ իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժին՝⁶ ցօղով.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն:

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք
Որ մըրըկաւ՝³ էինք զատուած.
Բախտին ամէն ոխ չար ու նենգ
Ի մի համբոյր ցրուին՝ ի բաց.
Ընդ աստեղօք՝⁴ ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն:

Մէկտեղ լացինք մենք ի Հնում...
Եկէք դարձեալ յար անբաժան
Նառնենք զարտօսը՝⁷ եւ ըզխնդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան՝⁸.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն:

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ.
Ըզհունձ բարեաց՝⁹ յերկինս հանենք,
Որ կեանք առնուն հայոց դաշտեր.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն:

ՀԱՍԿԱԼ ՀԱՏՈՒԱԾԸ

1. Նշել երկու համեմատութիւնները, բանաստեղծութեան մուտքին, որոնք կը չափեն «Եղբայր» բառին գեղեցկութիւնը:

2. Նշել եղբայրութեան խզման պատճառներուն ակնարկող երկու՝ գոյականները (բ. տուն):

Տրամաբանական բացատրութիւն կամ՝ ախտաճանաչում կրնա՞ն նկատուիլ ամոնք...

3. Արձակի վերածել ա. եւ գ. տուները ներկայ արեւմտահայերէնով: Ուշադիր եղէք իմաստին եւ քերականական *կառոյցներուն:

Բ. ԻՄ ՑԱՒԸ

Չարքունիքի բանաստեղծները, ազգային միության քննադատները, մշակած են հայրենասիրական *երակը: Տարբեր դրսևորումներով՝ անոնք շեշտած են հայրենիքին, ազգին զոհաբերելու *հրամայականը:

Նոյնիսկ Պետրոս Դուրեանի պէս նակարագրէն հալածական պայտանի մը՝ հայրենասիրական իր ապրումը փոխանցած է մեզի՝ իր քերթումներուն ճամբով: Անկեղծ եւ հաղորդական է իր շեւը՝ իր անչնական ողբերգութիւնը՝ *սրորադասելու ազգային ողբերգութեան - իր առաջին, գլխաւոր ցաւին:

6

Սուրբ տենչերով լոկ ծարաւած՝
Յամաք գտնել աղբերքն յամայր¹,
Յամբիլ ծաղիկ հասակի մէջ.
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Ջերմ համբոյրով մը դեռ չայրած՝
Սա ցուրտ ճակատքս դալկահար՝
Հանգչեցունել հողէ բարձին.
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Դեռ չգրկած էակ փունջ մը
Ժպտէ, գեղէ, հուրէ շաղկալ՝,
Գրկել սա ցուրտ հողակոյտը.
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Քաղցր երազով մ'յրդի մրափ մը
Չանդորրած գլուխս մրրկահար²,
Ննջել հողէ վերմակի տակ,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Չէք մարդկութեան մէկ ոստը գօս⁴,
Հայրենիք մը ունիմ թշուառ.
Չօգնած անոր՝ մեռնիլ աննչան.
Ո՛հ, ա՛յս է սոսկ⁵ ցաւ ինձ համար:

- 1. Երկար արեւ:
- 2. Ժպտել,
- գեղեցկութիւն...
- 3. Փոքրիկուր գլուխս չխաղաղեցուցած:
- 4. Չորցած, կէս-մեռած:
- 5. Միայն:

Վկայութիւն

ԴՈՒՐԵԱՆ՝ «ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ, 1900ԻՆ»

1900ի շուրջ ենք: Պատանի Յակոբ Օշական առաջին անգամ Դուրեան կը կարդայ, որուն քերթումներու ժողովածուն իրեն նուիրուած է երիտասարդ ուսուցչուհիի մը կողմէ:

«Պէտք է մեռնիլ» քերթումներէն մէկուն խորագիրն է:
«...Յաջորդ օրը ինձի կը դրկուէր դեղին թղթակազմ հայտը մը՝ «Տաղք եւ Թատերգութիւնք Պետրոս Դուրեանի» անունին վրայ, «Օրիորդ Պէաքիսէն, պզտիկ բանաստեղծին. մեծնալուն՝ յիշելու խնդրանքով»:
«Հայտը շեռքս՝ ելայ դուրս: Աերակեալ գրօսավայր մը, չգուած երեսի վրայ... Բացի գիրքը ու կարդալ ըսկըսայ: Կը հասկնայի «Պէտք է մեռնիլ»ը, բայց չէի հասկընար՝ ինչո՞ւ պէտք էր մեռնիլ, հսկառակ գարունքին, ծաղիկներու փառքին...»

«Միևսկ էի: Կարդացի: Վերջին քերթումսին հետ մտքը հիստիկ կը սկսէր... Ու ինկաւ գիրքը մայրներէս: Փոխը էի, արարում: Ոչ ոք՝ որ րեսներ արցունքներս...
«Գիշերը անցուցի անքուն: Առաւօտուն՝ րադարանին բոլոր բառերը փորագրուեր էին մըքիս րախարակին, շնորհիւ իմ սհատը յիշողութեան:

* * *

«Պարանիներուն համար, 1900ին, Դուրեան անվերածելի բանաստեղծութիւնն էր, ողբերգութիւնը: Գըրուած էր, որ ես ես գայի նոյն ողբերգութեան: Բայց պիտի գայի՞ առանց Դուրեանին - առանց այդ ուսուցչուհիին...
«Ահա ինչո՞ւ՝ այդ րդան մեր քերթողութեան մէջ ես կը գարեմ ընթացիկ կշիռներէն: Ինձի համար Դուրեան, ինչպէս Տասրայեալի, Փրոուս,- կենդանի ու անմահ խորհրդանշաններէն է յաւիտենական խռովքին...
«...Անոնց վրայ խօսիլ՝ ապրիլ է ինձի...»

«Համապարկեր Արեւմտահայ Գրականութեան», Բ.



«Մայր Չայաստան». պատկերացում 19րդ դարու

ՀԱՍԿՆԱԼ ՀԱՏՈՒԾԸ

1. Բանաստեղծը ի՞նչ բառերով կ'ըստ անկարելիութիւնները՝
 - ինքզինք իրագործելու.
 - սիրելու, սիրով *լիանալու.
 - բուժուելու:
2. Ո՞ր տողերէն ու բառերէն կը զգացուի, որ նըշուած գրկանքները շատ ծանր են բանաստեղծին համար՝ հակառակ չորս անգամ կրկնուած «**Չէ այնչափ ցաւ ինձ համար**» հաստատումին:
3. Վերջին տունին մէջ, հայրենիքին չօգնած մեռնելու ցաւին ուրիշ ի՞նչ ցաւ, «ինչպէ՞ս» մեռնելու ցաւ կը միանայ - միայն մէկ բառով՝ ածականով մը ըսուած:
 - Ուրեմն վիպապաշտ բանաստեղծ-տիպարը կեանքի մէջ նաեւ ի՞նչ ձգտումով *կը յատկանշուի:

Փաստարարութիւն

ՄԱՀ ՔԱՉՈՐԴԻՈՅՆ

*Մ. Պէշիկբաշեանի
հայրենասիրական
կտորներուն մէջ,
կարեւոր է տեղը
Չէյթունի նուիրուած
երգերուն:
Անոնց
անկեղծութիւնն ու
քաւիր լրիւ
կը մոռցնեն, որ
անոնք մասամբ օրար
գրականութիւններէ
*պարզամտեցուած
գործեր են:*

Դու գո՞վ խնդրես, մայր իմ անուշ.
Եկ, մի՛ դողար, մօտեցի՛ր հոս,
Անլաց աչօք դիտե՛ գորդիդ
Ու իւր վերքերն արիւնահոս.
Թրքաց մայրեր թող լան՝ ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Չէյթուն:

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ
Կակուղ ձեռքով փայփայելով
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր
Իբրեւ հրեշտակ նուագելով,
Չիս հանգչեցուր ի հող՝ եւ դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Չէյթուն:

«Նորեկ որդոյս կենացն արեւ
Չեզի համար փայլի, Հայեր՛».
Այսպէս յայնժամ դու կ'երգէիր՝
Օրօրոցիս նստեալ քովեր.
Անոնց համար շիջա՛ւ՝ եւ դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Չէյթուն:

Կարմիր կայլակք ցայտին վերքես.
Մակայն, մա՛յր իմ, նայե՛ չորս դին,
Չարիւնըռուշտ Թուրքերըն տես
Հագարներով փրոռած գետին.
Կերաւ զանոնք սուր մեր՝ եւ դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Չէյթուն:

Մռնչեցին ինչպէս վիշապ
Ու մեր վրայ յարձակեցան.
Ո՞վ հայրենիք, ի սուր ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան:
Կարմիր ներկան ձորք մեր՝ ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Չէյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց ոսկերք,
Չի չէ մեռած հայոց կրրակ,
Ու ցնծացին այնչափ գոհեր,
Չի լուծաւ վրէժ յարեան վտակ.
Խնտաց Մասիս, մա՛յր իմ, եւ դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Չէյթուն:

Վերջին համբոյր տամ քեզ, մա՛յրիկ,
Հատուցանես զայն սիրուիտոյս.
Վերջին անգամ գրկեմ մեր հող
Ոյր արդ կ'իջնամ ի ծոցն անլոյս:
Խաչ մը տնկէ վրասս՝ ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Չէյթուն:

Միքայել Նալբանդեան օ 1829 - 1866

Ծնած է Նոր Նախիջևան, Ռոստովի մօտ (հիւսիսային Կովկաս): Նախակրթութիւնը ստացած է ազատամիտ քահանայի մը՝ Տ. Գաբրիէլ Պատկանեանի մօտ: 1848ին առաջնորդարանի քարտուղար շրջած ու ճանչցած է Ռոսիոյ հայ համայնքները. ապա՝ Մոսկուա՝ հետեւած է համալսարանական դասընթացքներու: Թէև առողջութեամբ եղած է փափուկ՝ աշխատունակ, միաժամանակ հայերէն դասաւանդած է Լազարեան ճեմարան եւ աշխատակցած՝ Ստ. Նազարեանի «Հիւսիսփայլ»ին: Մեծ նպաստ բերած է արեւելահայերէնի կազմաւորման եւ արեւելահայութեան գաղափարական զարգացման:

*Արեւելագիտութեան համալսարանական վկայական ստանալէ ետք, 1860ին կը ճամբորդէ արտասահման կարեւոր առաքելութեամբ մը - դասաւորել հնդկահայ հարուստներէ Նոր Նախիջևանի համայնքին ձգուած մեծագումար *կտակներու

հարցը: Նախ կ'այցելէ Պոլիս, ըստեղծելով գաղութի մտաւորականութեան մէջ *ոգեւորութիւն, ու իր կարգին՝ ոգեւորելով անոնցմով (Յ. Սըլլամեան, էջ 26): Յետոյ, Լոնտոնի ու Փարիզի վրայով, կը մեկնի Կակաթա, ու կտակներու հարցը դասաւորած՝ կը վերադառնայ նոյն ճամբով, կրկին դադարներով Պոլիս ու Երուսալ:

Երուսալի մեծ քաղաքներուն մէջ, Նալբանդեան կ'ունենայ շփումներ՝ ժամանակի ընկերվարական մտածողներու եւ գործիչներու հետ, որոնց գաղափարները եւ գործի հեռանկարներն ալ կը բաժնէր: Հագի Նոր Նախիջևան հասած՝ իր հաշուետուութիւնը ընելու, 1862ին, կը ձեռքարկուի ցարական ոստիկանութեան կողմէ վրայէն կը գտնուին *ծածկագիր նամակներ ծանօթ յեղափոխականներէ:

Փեթերսպուրկ տարուելով, Նալբանդեան երեք տարի կը բանտարկուի քաղաքական բանտարկեալներու յատուկ բերդի մը մէջ:



Երբ հոնկէ կը հանուի արքայապետու համար Ռոսիոյ ներսերը՝ արդէն լրի քայքայուած էր առողջութիւնը: Տարի մը ետք, կը մեռնի Կամիշին քաղաքին մէջ:

Հանդիսաւորապէս կը բերուի ու կը թաղուի Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը:

Իր Գործերէն՝

- Բանաստեղծութիւններ (մամուլի մէջ):
- «Մտեղիսարցունկ» (վէպ):
- «Երկրագործութիւնը որպէս Ուղիղ ճանապարհ» (ընկերա-տնտեսագիտական փորձ):
- «Ազգային Թշուառութիւն» (փորձ):

III. ԱԶԳ, ՀԱՅՐԵՆԻՔ, ՊԱՅՔԱՐ

Գ. ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Հոս բանաստեղծը յերադարձ ակնարկով կը քննէ իր կեանքը, սկսած մանկութենէն: «Կեանքի խորհուրդ»ին սահմանումը կը կարարուի յեղափոխական խոր նուիրումով, նաեւ միաւորական ուժգին թափով ու յայրակութեամբ, որոնք յայրուկ էին Նալբանդեանի՝ անհայրականութեան:

Միս կողմէ, զրական արուեստի գեղանի վրայ, հոս կրնանք համեմատել արեւմտաւորահայ եւ արեւելահայ բանաստեղծական ասանդութիւնները. մինչ առաջինը, Պէշիքաշլեանի եւ Գուրեանի մէջէն, արդէն կ'երեւի իբր անելի գեղարուեստական ու մշակեալ, երկրորդը քարոզչական է ու պարզ, անելի մօտ՝ արշակի:

7

Մանկութեան օրեր, երազի նման Անցաք գրնացիր, այլ չէք դառնալու. Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր, Ընդունակ միայն ուրախացնելու:

Ձեզանից յետոյ եկաւ գիտութիւն, Իւր ծանր հայեացքով աշխարհի վրայ, Ամէն բան ընկաւ մոռացութեան մէջ, Բոպէ չմընաց ազատ կամ ունայն:

Գիտակցութիւնը յաջորդեց սորան, Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս. Ապոլոն՝ տուեց ինձ իր քրնարը, Որպէս փարատիչ տրտում ցաւերիս:

Աւա՛ղ, այդ քնարն իմ ձեռքում Հնչեց Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար, Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը. Ուրախացուցիչ չգըտայ մի լար՞:

Ես այն ժամանակ միայն ըզգացի, Որ այդ ցաւերից ազատուելու չեմ, Որչափ իմ ազգը կը մընայ ստրուկ, Օտարների ձեռք, անխօս, տխրաղէմ:

Լո՛ւտ կաց դու, քնար, այլ մի՛ Հնչիր ինձ, Ապոլոն, յետ ա՛ռ դարձեալ դու նրան. Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է Ձո՛հ բերել կեանքը սիրած աղջրկան:

1. Բանաստեղծութեան ստորագրւածը:
2. Ոչ մէկ լար, ոչ մէկ

3. Մեր կեանքին իմաստը

Ես պիտի դուրս գամ դէպի հրապարակ,
Առանց քնարի, անզարդ խօսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խաւարի ընդդէմ պատերազմելով:

Ներկայ օրերում այլ ի՞նչ սեւ քնար,
Սուր է հարկաւոր կտրիճի ձեռքին.
Արին ու կրրակ թշնամու վրայ.-
Այս պիտի լինի խորհուրդ
[մեր կեանքին³:

ՀԱՍԿՆԱԼ ՀՍՏՈՒԾՈՐ

1. Յոյց տալ, որ քերթուածը, իր երկու կէտերով, եւ ոչ անպայման Նալբանդեանի նշած փուլերով, կը համապատասխանէ իր կեանքի երկու գլխաւոր մասերուն: Սահմանել ամէն մէկը:

2. Կտորին առաջին մասը, յատկապէս առաջին տունը, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կրնայ շեղեցնել անու-

շաղիր ընթերցողը իր բուն միւթն (տուներ 5-8):

- Այսպիսի շեղումով մը դէպի մանկութիւն, այսպիսի ծածկող-ծպտող խորագիրով եւ սկզբ-նաւորութեամբ՝ Նալբանդեան նաեւ ի՞նչ գործ-նական-քաղաքական նպատակ կրնայ հետապնդած ըլլալ...

Փաստարոյք

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՒ ՄԱՐԿԱՊՍՇՏ Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՈՒԽՏԸ՝ «ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ»

Մ. Նալբանդեան իր
* ժամանակակիցներէն
կը զարդոյնուր
յեղափոխական բուռն
* խառնուածքով մը,
որուն կ'աւելնան այլ
շնորհներ - հոգեկան
բացատրիկ ազնութիւն եւ
միտաւոր
լայն հորիզոն:
«Երգ Ազատութեան»ը
ամենախիտը շեւով
կը ցոլացնէ այդ
* առաքինութիւնները:

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել.-
Ես անբարբառ մի մանուկ,
Երկու շեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւն գրկեցի:

.....
«Ազատութիւն»- ինչ կրկնեց
ճակատագիրն վերեւից,-
Ազատութեա՞ն դու զինուոր
Կամիս գրուիլ այս օրից...

Ո՛հ, փշուր է ճանապարհ,
Քեզ շապ փորչանք կը սպասէ.
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»:

- Ազատութիւն,- գոչեցի.-
Թո՛ղ որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ.
Թո՛ղ դառ դրնէ բշտամին.
Ես մինչ ի մահ, կախադան,
Մինչեւ անարգ մահու սին,
Պիտի գոռամ, պիտի կրկնեմ
Անդադար Ազատութիւն:



Ռափայէլ Պատկանեան օ 1830 -

գրքոյկներ, ուր ուշադրութիւն կը գրաւեն իր բանաստեղծութիւնները: Անկէ ետք, կը գործածէ Գամառ Քաթիպա գրական ծածկանունը:

«Արարի Արդատութիւն» եւ ուրիշ գործեր, արդէն այդ օրերէն ամէն կողմ կարդացուելով, կը տարածեն իր անունը, միանգամայն նպաստելով հայութեան զարթնումին:

Կը գրէ ու կը հրատարակ վէպեր: Բաւական այլազան՝ իր գործը *առանցք ունի՝ խորհրդածութիւնը հայութեան պատմական ճակատագիրին ու մանաւանդ օրուան վիճակին մասին: Բայց նաեւ պայքարի կոչ, քննադատութիւն ու դատապարտում հայութեան ցաւե-

րուն անտարբեր օտարներու եւ հայ անգիտակից անձերու ու խաւերու:

Մեծ է եղած իր դերը՝ աշխարհաբարի մշակման ու տարածման մէջ:

Պատկանեան 1866ին վերադարձած է Նոր Նախիջեւան, ուր գրական արտադրութեան կողքին՝ տարած է ուսուցչական գործունէութիւն: Իր կիներ՝ հայերէն սորված ու ըզգացումներով հայացած օտարուի մը, սերտօրէն կ'օժանդակէր իրեն:

Թաղուած է հայրենի քաղաքին մէջ, Ս. Խաչ վանքը:

Իր Գործերէն՝

- Բանաստեղծութիւն՝ «Ազատ Երգեր»:

- Վէպ՝ «Ես Նշանած էի»:



III. ԱՁԳ, ՀԱՅՐԵՆԻՔ, ՊԱՅՔԱՐ

Գ. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Ռասիայի Պապականեանի հայրենասիրական Վարդապետը հոս՝ ունի նախորդներէն Կարբեր ոճ, կը բերէ զգացումներու Կարբեր՝ երանգ, որ պիտի փորձենք սահմանել:

Առաջին իսկ րոտէն՝ բանաստեղծը «կը մարդացնէ» հայրենի Արաքս գետը եւ կը հարցապնդէ զայն: Սակայն այս վիպասաչար ոճի՝ անհնատրումը եւ հարցապնդումը, որքան ալ միամիտ, վարակիչ են, յուզիչ: Ու կրնանք հասկնալ, որ սերունդները՝ համար՝ «Մայր Արաքսի ափերով»ը եղած ըլլայ ազգային Երգը՝ գլխագիր...

8

**Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին Հին դարուց յիշատակ
Արեաց մէջը պրտրում՝ եմ:**

**Բայց նորա միշտ յեղյեղուկ²
Պղտոր ջրով եղերքին
Դարիս դարիս՝ խփելով
Փախում էին լալագին:**

**«Արաքս, ինչո՞ւ ձկանց Հետ
Պար չես բռնում մանկական.
Դու դեռ ծովը չհասած՝
Սրգաւոր ես ինձ նըման:**

**Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէզ, Հրպարտ աչերից.
Ինչո՞ւ արագ փախում ես
Այդ հարազատ ափերից...»**

**Մէջը ուղցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից.
Ամպի նման գոռալով
Այսպէս խօսեց յատակից.**

**«Որդա՛խ, անմիտ պատանի,
Նիրհրս ինչո՞ւ դարեւոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր:**

**Սիրելի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գըլուխ պըճնուի՞
Իր դարդերով թանկագին:**

**Կար ժամանակ, որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պչրանքով⁵
Փախում էի ափերէս:**

**Ի՞նչրոս մընաց էն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերըս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս:**

**Մինչ իմ որդիք, ո՞վ գիտէ,
Ծարաւ, նօթի, անտերունչ,
Օտար աշխարհ յածում են⁶
Թոյլ ոտքերով, կիսաչունչ...**

**Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կը մնան պանդուխտ,-
Ինձ միշտ սգուր կը տեսնէք.
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»**

**Էլ չխօսեց Արաքսը.
Յորձանք տուեց ահագին,
Օղակ օղակ, օձի պէս,
Առաջ սողաց մոլեգին:**

1. Փնորել:
2. Փոփոխական, շարժուն:
3. Դար՝ եզերք, գործիական հոլով:
4. Ջարդարուիլ:
5. Նագանք:
6. Թափառի:

ՀԱՍԿՆԱԼ ՀԱՏՈՒԱԾԸ

1. Արաքսի վերածումը կնոջ/մօր տիպարի, սկիզբը, ո՞ր պատկերներով կը զարգացուի շարունակութեան մէջ (տուներ 4, 7, 8, 10-11): փոփել բանաստեղծին պատգամը, անուղակի յայտնուած՝ նախավերջին տունին մէջ:
2. Անցնելով անդին վիպասաչտ պատկերէն, ամ- - Անիկա ինչո՞վ կը կապուի Ջարթօնքի բանաստեղծներու հայրենասիրական թեմաներուն:

ԲՆԱԲԱՆ III. ՀԱՍԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Մ. Պէշկիթաշլեանի երկերու մէկ ժողովածուին մէջ, գտնել ու կարդալ «Ձէյթունեան» քերթուածներու շարքին չորս կտորները: Անոնց մէջ ընդգծել ազգային գիտակցութեան, Վարժանապատուութեան եւ գինեալ ինքնապաշտպանութեան գաղափարները թելադրող արտայայտութիւնները:
2. Գրել ամփոփ աշխատանք մը հրահանգ 1ի թեմաներուն շուրջ՝ համադրելով ու համեմատելով Մ. Պէշկիթաշլեանի եւ Մ. Նալբանդեանի գաղափարները, ընդգծելով անոնց նմանութիւնները:
3. «**Երգ Ազատութեան**» քերթուածի լոյսին տակ, բացատրել եւ մեկնաբանել Լ. Շանթի հետեւեալ գնահատումը Մ. Նալբանդեանի մասին. «**Իր կեանքով, գործունէութեամբ եւ տառապալից մահով՝ առնուազն կէս դար մը կանուխ ծնած էր ան... 19րդ դարու արեւելահայ ամենէն ազնիւ եւ ամենէն նուիրեալ դէմքն էր**»:



ՊԱՏՈՒՀԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հայկական նոր *գեղանկարչությունը, ինչպես գրականությունը, իր ծաղկումը կը սկսի 19րդ դարու կեսերուն: Հոս՝ քանի մը «պարունահան»ներէ միայն արագ ակնարկներ պիտի նկատենք անոր վրայ:



«Ջրիեղեղը»

Ծնած Սեւ Ծովի ափին, Խրիմ, Յովհաննէս Այվազովսկի (1817-1900) պարսկախոսներէն դրսևորած է նկարչական իր փառանդը: Ուսանած՝ Փեթերսպուրկ, ամբողջապէս՝ Իտալիա եւ այլ երկիրներ, շուրջով աննշուած է իբր *հանձարեղ ծովանկարիչ՝ ամբողջ Եւրոպայի մէջ:



*Արուեստագիտութեան Եւրոպայի իտալացի «Այվազովսկոյ վիպապաշտութեան» հէնքը իր դարաշրջանի ազատատենչ ոգին է, *տիեզերքի փոքր *էակի՝ մարդու հաւատը կեանքի ու բնութեան հանդէպ»:

Հարուած մը՝ գրագէտ եւ նկարիչ Տիգրան Զրաբեանի մէկ էջն, գրուած Այվազովսկիի մահուան առթիւ:

Այվազովսկիին մեռեր է: Ահա աներեսակայելի բան մը... Միքէ ջնջո՞ւմ մըն է հզօր ծերունիին մահը. այն վահանաններէն չէ՞, որ սուգի տեղ զմայլում կը ծնին...

Կը զգայիր, թէ իր խաժ ոլորտին մէջն էր, կանգուն, հոյակապ... Ծովապետն էր... Իր վրջինը՝ ամենակարող, անփոյթ՝ սարուածային էր, ինչպէս Պոսիդոնի երեք-ժաննին:

Մեռաւ: Թող Սեւ Ծովին մէջ թաղեն զինքը: Թող իր մարմինը փակնէն բացերը, Խրիմի ժայռերէն փակնուած հորիզոններուն մէջ, եւ հոն ծովը չգեն: Իր մկրտութեան, օծման աւագանը իր գերեզմանը թող ըլլայ: Իրացումը փոխադարձ եւ ամբողջ ըլլայ:

Ծովու գաղափարն էր. թող ընկղմի հոն՝ ուրկէ հիաստեղծուեր էր: Սկիւտար (Պոլիս), Յուլիս 1900

Թելադրանք.- Սեկնաբանել-արժեւորել Տիգրան Զրաբեանի արտայայտութիւնները Այվազովսկիի մասին: Ո՞ր դարձը-լաճքներուն, ո՞ր գաղափարին մէջ յատկապէս՝ կը տեսնենք Զրաբեանի պատգամին ուժգնութիւնն ու խորութիւնը:



Գէորգ Բաշինջաղեան (1857-1923) հայկական գեղանկարչութեան *բնանկարի առաջին վարպետն է: Ծնած Վրաստանի մէկ գաւառը՝ ուսանած է Փեթերսպուրկի ակադեմիային մէջ: Ապրած-գործած է Թի.Ֆլիս: Ծամբորդած է շար, շրջած է Կովկասը, Հայաստանը:



Ծանշցում է իբր «հայրենիքի դարատր խորհրդանիշներ Արարարի ու Սեւանի նուիրեալ երգիչ». իր արուեստը կը համադրէ վիպապաշտը եւ իրապաշտը փարբեր:

Բաշինջաղեան նաև գրագէտ է. իր իսկ գրիչէն ահա իր առաջին հանդիպումը Սեւանի հետ.-

ԵՐԵՎԱՆԻ ՍԵՒԱՆԻ ՎՐԱՅ

Լիճը փռուած է առջեւ: Աշնան երեկոյ է: Մուգ-կապոյտ երկինքը, որի իսկական գոյնը կարելի չէ արտայայտել բառերով, ճշգրտեամբ անդրադարձել է ջրի մէջ...

Ծովակը ներկայացնում է մի ահագին անշեռագործ հայելի, որի մէջ երկինքը, մի քանի հարիկ խոշոր սարդերով,

փակնում է իրան... Կղզին, խորհրդատր կերպարանքով ջրից դուրս ցցուած, պառկել է մակերեսի վրայ:

... Լուսինը շարունակում է բարձրանալ... երբեմն վերցնում է բոլորակ դէմքից քօղի մի անկիւնը, նայում է ցած, փակնում է լճի մէջ իր երեսը եւ նորից մտնում քօղի փակ...